



«Քաղաքացիական հասարակության հզորացումը
ՀՀ մարզերում»
ԾՐԱԳԻՐ

Շիրակի մարզի հյուսիսային միավորված
համայնքներում գյուղատնտեսության
ներկա վիճակը, բնապահպանական
մարտահրավերներն ու զարգացման
հեռանկարները

Վերլուծություն իրականացնող կազմակերպություն
«ԲԻՈՍՈՖԻԱ» առողջապահության, բնապահպանության և
գյուղատնտեսության զարգացման կենտրոն» ՀԿ

ԳՅՈՒՄՐԻ - 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածություն.....	3-6
2.	Շիրակի մարզի հյուսիսային միավորված համայնքների ընդհանուր բնութագիրն ու տնտեսության նկարագիրը	6-21
	2.1 Համայնքների ընդհանուր բնութագիրը	6 - 8
	2.2 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը և կլիմայական պայմանները	8 - 9
	2.3 Ժողովրդագրական իրավիճակը	9 - 15
	2.4 Գործող հիմնական կառույցները և տնտեսության նկարագիրը	15 - 18
	2.5 Կառավարումը և քաղաքացիական ակտիվության բնութագիրը	18 - 19
	2.6 Տարածաշրջանի SWOT վերլուծությունը	20 - 21
3.	Շիրակի մարզի հյուսիսային միավորված համայնքների հիմնական ագրոռեսուրսներն ու ագրոկլիմայական պայմանները	22 - 49
	3.1 Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսները	22 - 28
	3.2 Անասնապահությունը	28 - 36
	3.3 Բուսաբուծությունը	37 - 41
	3.4 Գյուղատնտեսական տեխնիկական և ենթակառուցվածքները	41 - 47
	3. 5 Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մարդկային ներուժը	47 - 48
	3.6 Թիրախային տարածաշրջանի ագրոկլիմայական պայմանները.....	48 - 49
4.	Թիրախային տարածաշրջանում գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայմանները, դրան նպաստող ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորություններն ու խոչընդոտները	50 - 62
5.	Թիրախային տարածաշրջանում գյուղական համայնքների և գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական դերակատարներն ու անելիքները	62 - 68
6.	Ամփոփում և առաջարկություններ	69 - 73

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է, որը տալիս է երկրի համախառն ներքին արդյունքի 12%-ը (2019թ.) և զբաղվածություն ապահովում բնակչության 24,3%-ի համար: Երկրում գերակշռում են փոքր ֆերմերային տնտեսությունները՝ մասնատված փոքր հողակտորներով: Ըստ 2014թ. գյուղատնտեսության համատարած հաշվառման՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է 317346 ֆերմերային տնտեսություն, որոնք ապահովում են երկրում արտադրվող գյուղատնտեսական համախառն արտադրանքի մոտ 97%-ը:

Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում աչքի է ընկնում ցածր արդյունավետությամբ, բերքատվության միջին մակարդակով, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների սահմանափակ կիրառությամբ, ինչն էապես ազդում է ինչպես գյուղատնտեսական արտադրանքի քանակի, որակի և գնի, այնպես էլ արտահանման ծավալների վրա:

ՀՀ կառավարության 19.12.2019թ. N1886-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը», որի առաջիկա տասը տարիների տեսլականն է՝ «ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն»¹:

Գյուղատնտեսության զարգացմանն առնչվող դրույթները տեղ են գտել նաև 2019թ. ընդունված ՀՀ Կառավարության ծրագրի 5-րդ բաժնում, որի 5.10 կետն ամբողջությամբ նվիրված է գյուղատնտեսությանը: Այնտեղ մասնավորապես նշվում է, որ Հայաստանի կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ողջ արժեքը թայում ընդգրկված սուբյեկտների՝ տնային տնտեսությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամուտների ավելացումը²:

¹<https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf>, էջ 35:

²<https://www.gov.am/files/docs/3133.pdf> :

Շիրակի մարզը միշտ էլ աչքի է ընկել զարգացած գյուղատնտեսությամբ: Մինչև 1988թ. մարզում արտադրվել է հանրապետությունում արտադրվող շաքարի ճակնդեղի 75%-ը և հացահատիկի ավելի քան 35%-ը, զգալի քանակ են կազմել նաև կաթի և մսի արտադրությունները: Մարզն աչքի է ընկնում գյուղատնտեսական նշանակություն ունեցող բնական ռեսուրսների առկայությամբ և անասնապահության ծավալներով: Մարզի ընդհանուր տարածքի շուրջ 63%-ը զբաղեցնում են գյուղատնտեսական նշանակության հողերը, ինչը գյուղատնտեսությունը զարգացնելու ամենակարևոր նախապայմանն է:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում տեղի ունեցած արմատական փոփոխություններն էապես ազդել են Շիրակի մարզի գյուղատնտեսական արտադրության և համախառն բերքի ծավալների վրա: Հողի և անասնապահության մասնավորեցումը, համատեղ և կոլեկտիվ տնտեսությունների լուծարումը և անցումը տնտեսվարման նոր համակարգի հանգեցրել են Շիրակի մարզի գյուղատնտեսության արտադրական ցուցանիշների կտրուկ նվազման:

Գյուղատնտեսական հիմնական միջոցների ապապետականացումը հողագործության ոլորտում հանգեցրել են հողատարածքների խիստ մասնատման, բույսերի մշակության ագրոտեխնոլոգիաների անբավարար կիրառության, օգտագործվող օրգանական պարարտանյութերի ծավալների կրճատման, բույսերի պաշտպանության միջոցների կիրառության նորմերի կոպիտ խախտումների, մշակովի հողերի դեգրադացիայի և բերքատվության անկման, բարձրորակ տեսակային սերմերի ու դրանց հիբրիդների օգտագործման սահմանափակ հնարավորությունների և այլն: Նկատելիորեն վատացել է նաև վարելահողերի օգտագործման ցուցանիշը, հատկապես լեռնային և սակավաբնակ գյուղերում:

Էական կորուստներ է կրել նաև անասնապահությունը: Կրճատվել է գյուղատնտեսական կենդանիների քանակը՝ հատկապես ոչխարների, խոզերի և թռչունների: Անասնազլխաքանակի մասնավորեցումը հանգեցրել է ապրանքային մասնագիտացված տնտեսությունների, կենդանական ծագման մթերքների և հումքի վերամշակման ձեռնարկությունների քայքայման, գրեթե վերացել են խոշոր անասնապահական ֆերմաները, ստեղծվել են փոքրիկ գյուղացիական տնտեսություններ, որոնք դժվարացրել են բուժկանխարգելիչ և անասնաբուժասանիտարական միջոցառումների կազմակերպումն ու իրագործումը: Անասնաբուժական արտադրական ենթակառուցվածքների փլուզման և տեխնոլոգիական ապահովման անբավարարության պատճառով խիստ տուժել է տոհմային անասնաբուծությունը, ինչը բերել է կենդանիների մթերատվության և սերնդատվության անկման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների նվազման:

Խզվել է կապը գյուղատնտեսության ոլորտի գիտական կազմակերպությունների և արտադրության միջև, խիստ դժվարացել գիտատեխնիկական նվաճումների ներդրումն ու մասնագիտական ծառայությունների մատուցումը:

Ագրարային ոլորտի հիմնական միջոցների մասնավորեցումից և ոլորտի կառավարման գործընթացում տեղի ունեցած փոխակերպություններից հետո առաջ են եկել մի շարք հիմնախնդիրներ և մարտահրավերներ, որոք խոչընդոտում են գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացումը Շիրակի մարզում:

Շիրակի մարզի տարածքում գյուղատնտեսության ոլորտի զարգացման և էկոհամակարգերի վրա բացասական ազդեցությունների տեսակետից առավել խոցելի տարածաշրջաններ են նախկին Ամասիայի և Աշոցքի շրջանները, որոնք ներկայումս վարչատերիտորիալ բաժանման նոր իրողությունների պայմաններում վերածվել են՝ Արփի, Ամասիա, Աշոցք և Սարապատ միավորված համայնքների:

Թիրախային տարածաշրջանն ունի մի շարք կարևորագույն առավելություններ ու չափազանց նպաստավոր նախապայմաններ կայուն գյուղատնտեսության զարգացումը խթանելու և գյուղատնտեսական արտադրությունն արդյունավետ վարելու համար.

- բավականաչափ ընդարձակ արոտավայրեր և խոտհարքներ,
- բարձր որակի ազատ վարելահողեր,
- ոռոգման նպատակով օգտագործելի մաքուր ջրեր, որոնք կարող են կիրառվել ինքնահոս եղանակով,
- բնական լանդշաֆտների մեծ բազմազանություն, որոնց զգալի մասը կարող են վերածվել կայուն ագրոլանդշաֆտների,
- նպաստավոր բնակլիմայական պայմաններ՝ արևային օրերի բարձր և տեղումների բավարար մակարդակով,
- ագրո և էկոտուրիստական չիրացված իդեալական հնարավորություններ,
- գյուղատնտեսական անասնազխաքանակի ավելացման ներուժ,
- մեղվաբուծության զարգացման գերազանց պայմաններ,
- համապատասխան աշխատուժ և գյուղատնտեսական գործունեության կազմակերպման կարողություններ,
- գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասնագետներ,
- համեմատաբար մոտ գտնվող սպառման շուկա,
- հանքարդյունաբերությունից և արդյունաբերական այլ աղտոտող ուղղություններից զերծ տարածք,
- կայուն և օրգանական գյուղատնտեսության վարման կատարյալ պայմաններ,
- և այլն:

Սույն հետազոտության նպատակն է հնարավորինս ամբողջական ուսումնասիրել և նկարագրել ՀՀ Շիրակի մարզի հյուսիսային հատվածի չորս միավորված համայնքներում՝ Սարապատ, Աշոցք, Ամասիա և Արփի (*հետագայում՝ թիրախ տարածաշրջան*), գյուղատնտեսության ներկա վիճակն ու առկա հիմնախնդիրները, սոցիալ-տնտեսական և բնապահպանական մարտահրավերները, նախանշել զարգացման առավել հեռանկարային և մեծ ներուժ ունեցող ուղղություններն ու դրանց իրագործմանն ուղղված գործողությունները, ցույց տալ քաղաքացիական հասարակության կարիքներն ու դերակատարությունը դրանց լուծման և առկա մարտահրավերների հաղթահարման գործընթացներում:

Նշված նպատակին հասնելու համար իրականացվել են հետևյալ հիմնական քայլերը.

- Համայնքներից, վիճակագրական տեղակագրերից, տարբեր տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն վերոհիշյալ համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի, գյուղատնտեսական ռեսուրսների, գյուղատնտեսության ներկա վիճակի և առկա հիմնախնդիրների վերաբերյալ, դրանք դասակարգվել են ըստ ուղղությունների՝ իրականացնելով նշված համայնքների գյուղատնտեսական ներուժի բացահայտում և քարտեզագրում:
- Ստացված տեղեկատվությունը վերլուծելու և ավելի ակնառու ներկայացնելու նպատակով կազմվել են համապատասխան աղյուսակներ և սխեմաներ:
- Նշված համայնքներում բացահայտվել են տնտեսության և մասնավորապես գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ բնակչության հիմնական կարիքները, ու դրանք դասակարգվել են ըստ առաջնահերթությունների:
- Ըստ համայնքների՝ նախանշվել են զարգացման առավել հեռանկարային և մեծ ներուժ ունեցող ուղղությունները, ու մշակվել դրանց իրագործմանն ուղղված համապատասխան առաջարկություններ և գործողություններ:
- Ներկայացվել են քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների և կառույցների դերակատարությունն այդ կարիքները ճիշտ հասցեագրելու, դրանց լուծմանն ուղղված նախաձեռնությունների խթանման և առկա մարտահրավերների հաղթահարման գործընթացներում:

2. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՐ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Համայնքների ընդհանուր բնութագիրը

ՀՀ Շիրակի մարզի հյուսիսում ներկայումս տեղակայված է 4 բազմաբնակավայր կամ այսպես կոչված, միավորված համայնք՝ Ամասիան, Արփին, Աշոցքը և

Այս համայնքներից յուրաքանչյուրում ներառված են 9-15 բնակավայր, որոնք մինչև 2016 թվականը եղել են առանձին գյուղական համայնքներ: Նշված համայնքների կազմերում չկան քաղաքային բնակավայրեր, բոլոր բնակավայրերը գյուղական են:

Շիրակի մարզի սխեմատիկ քարտեզը համայնքների միավորումից հետո



7

Հովտուն, Մեղրաշատ, Ողջի, Ջրաձոր և մեկ ոչ մշտական բնակեցված՝ Կամխուտ բնակավայրը, որոնք տեղակայված են Ախուրյան գետի աջ և ձախ ափերին, ծովի մակարդակից 1630-2000 մետր բարձրությունների վրա: Կենտրոնն Ամասիա բնակավայրն է:

Արփի համայնքի մեջ նույնպես ընդգրկված է 9 մշտական բնակեցված բնակավայր՝ Ալվար, Աղվորիկ, Արդենիս, Բերդաշեն, Գառնառիձ, Զարիշատ, Զորակերտ, Ծաղկուտ և Շաղիկ, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1980-2170 մետր բարձրությունների վրա: Բացի այդ, համայնքի կազմում կա սակավ կամ ոչ մշտական բնակեցված ևս մի քանի բնակավայր՝ Արավետը, Երիզակը, Պաղակնը, Դարիկը, Եղնաջուրը և Լորասարը: Համայնքի տարածքում է գտնվում Արփի լճի ջրամբարը, որն ունի ավելի քան 20 քառ. կմ մակերեսությամբ և 100 մլն խոր. մետր ջրակուտակման ծավալ: Կենտրոնը Բերդաշեն բնակավայրն է:

Աշոցք միավորված համայնքի կազմում ներառված է 11 բնակավայր՝ Աշոցք, Բավրա, Զույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ և Փոքր Սեպասար, որոնք տեղակայված են ծովի մակարդակից 1990-2150 մետր բարձրությունների վրա: Համայնքի կենտրոնն Աշոցք բնակավայրն է:

Սարապատ համայնքի մեջ ընդգրկված է 15 բնակավայր՝ Արփենի, Բազգյուղ, Գոգհովիտ, Թորոսգյուղ, Լեռնագյուղ, Կաքավասար, Հարթաշեն, Հողմիկ, Զորաշեն, Մուսայելյան, Սալուտ, Սարապատ, Վարդաղբյուր, Ցողամարգ և Փոքր Սարիար, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1800-2070 մետր բարձրությունների վրա: Կենտրոնը Թորոսգյուղ բնակավայրն է:

2.2 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը և կլիմայական պայմանները

Թիրախային համայնքների աշխարհագրական դիրքը, ռելիեֆը և կլիմայական պայմաններն ունեն շատ ընդհանրություններ, այդ պատճառով նպատակահարմար ենք համարում դրանք ներկայացնել տարածաշրջանային, ամբողջացված տվյալների տեսքով:

Թիրախային տարածաշրջանն արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից՝ Լոռու մարզին: Աշխարհագրական դիրքը նախալեռնային, լեռնային ու բարձր լեռնային է, ծովի մակարդակից բարձրությունը 1630-3196 մետրի սահմաններում (Աչքասար լեռ): Տարածքը համեմատաբար ցածրադիր և հարթ է գետահովիտներում, բարձրադիր ու կտրտված՝ դեպի լեռնաշղթաները տարածվող հատվածներում: Տարածքի ռելիեֆը բարդ է և շատ հատվածներում հիմնականում իրենից ներկայացնում է ալիքաձև սարահարթեր ու սարավանդներ: Արևմուտքում՝ Եղնախաղի լեռնաշղթան է, հյուսիս-արևելքում՝

Ջավախքի, հարավ-արևելքում՝ Բագումի, իսկ հարավում՝ Շիրակի լեռնաշղթաների լեռնաբազուկներն են, որոնց մի մասը հերկվել և վերածվել են ագրոլանդաֆոնների:

Տարածաշրջանի զգալի մասում կլիման բարեխառն ցամաքային է, իսկ ավելի բարձրադիր հատվածներում՝ ցուրտ լեռնային, լավ արտահայտված վերընթաց գոտիականությամբ: Բնութագրվում է համեմատաբար կարճատև տաք ամառներով ու երկարատև, հաստատուն ձնածածկույթով և ցուրտ ձմեռներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը $4,1^{\circ}\text{C}$ է, հունվարի միջին ջերմաստիճանը մինուս 10°C –ից մինուս 14°C է, հուլիսինը՝ $10-16^{\circ}\text{C}$: Ամռանն օդի բացարձակ ջերմաստիճանը հասնում է մինչև $+32^{\circ}\text{C}$ -ի, իսկ ձմռանը՝ $-36-40^{\circ}\text{C}$ -ի: Տարածաշրջանի Պաղակն բնակավայրում է դիտարկվել Հայաստանում գրանցված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -46°C :

Տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակը 550-800 մմ է: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Գերակայում են 3,5-6,0 մ/վրկ արագությամբ արևելյան և հյուսիսային քամիները: Ձմռանը ձնածածկույթը հասնում է 60-80սմ-ի, ձնաբքերի պատճառով երբեմն միջհամայնքային ճանապարհները դառնում են անանցանելի:

2.3 Ժողովրդագրական իրավիճակը

Թիրախային տարածաշրջանի համայնքներում վերջին 30 տարիների ընթացքում տեղի են ունեցել ժողովրդագրական էական փոփոխություններ, որոնք հետևանք են հիմնականում բնակչության արտագաղթի ու բնական վերարտադրության անկման:

Ամասիայի տարածաշրջանի բնակչությունը 1988թ. կազմել է 19.497 մարդ, իսկ 2020թ.՝ 5630 մարդ, այսինքն՝ այդ ընթացքում տարածաշրջանի բնակչությունը նվազել է 3,46 անգամ, ինչը հիմնականում պայմանավորված է աղբյուրների զանգվածային արտագաղթով, սակայն տեղի է ունեցել նաև հայերի ներգաղթ՝ հիմնականում Ջավախքի հայաբնակ գյուղերից, Շիրակի մարզից և ՀՀ այլ բնակավայրերից³:

Նույն ժամանակահատվածում Աշոցքի տարածաշրջանի բնակչությունը չի նվազել, այլ ընդհակառակն աճել է: 1988թ. Աշոցքի տարածաշրջանում բնակվել է 6424 մարդ, իսկ 2020թ.՝ 11.329 մարդ, այսինքն բնակչությունն ավելացել է 1,76 անգամ:

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների⁴՝ թիրախային տարածաշրջանի համայնքներում բնակչության քանակական տվյալներն առ 01.01.2020թ. հետևյալն են.

³Արտաշես Բոյաջյան, «Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում (XXդ. - XXIդ. սկիզբ)»

<http://www.shirakcenter.sci.am/pictures/gitashkhatutiunner/2018/21%20p/15%20%D4%B1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A5%D5%BD%20%D4%B2%D5%B8%D5%B5%D5%A1%D5%BB%D5%B5%D5%A1%D5%B6.pdf>

⁴<https://armstat.am/file/doc/99521573.pdf>

Թիրախային տարածքի միավորված համայնքների մշտական բնակչության
թվաքանակն ըստ բնակավայրերի, առ 01.01.2020թ.

ԱՄԱՍԻԱ համայնք		ԱՇՈՑՔ համայնք	
Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչությունն առ 01.01.2020թ.	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչությունն առ 01.01.2020թ.
Ամասիա	1656	Աշոցք	2815
Արեգնադեմ	429	Բավրա	686
Բանդիվան	221	Զույգաղբյուր	532
Բյուրակն	634	Թավշուտ	388
Գտաշեն	203	Կարմրավան	234
Կամխուտ	11	Կրասար	547
Հովտուն	155	Ղազանչի	648
Մեղրաշատ	363	ՄեծՍեպասար	919
Ողջի	357	Սարագյուղ	258
Զրաձոր	247	Սիգավետ	396
		Փոքր Սեպասար	215
ԸՆԴԱՄԵՆԸ	4276	ԸՆԴԱՄԵՆԸ	7638
ԱՐՓԻ համայնք		ՍԱՐԱՊԱՏ համայնք	
Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչությունն առ 01.01.2020թ.	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչությունն առ 01.01.2020թ.
Ալվար	112	Արփենի	370
Աղվորիկ	72	Բաշգյուղ	56
Արավետ	-	Գոգհովիտ	424
Արդենիս	205	Թորոսգյուղ	369
Բերդաշեն	164	Լեռնագյուղ	23
Գառնառիճ	184	Կաքավասար	128
Դարիկ	14	Հարթաշեն	119
Եղնաջուր	30	Հողմիկ	422
Զարիշատ	86	Զորաշեն	224
Զորակերտ	174	Մուսայելյան	355
Ծաղկուտ	127	Սալուտ	99
Շաղիկ	86	Սարապատ	106
Պաղակն	100	Վարդաղբյուր	139
Երիզակ	-	Յողամարգ	596
Լորասար	-	Փոքր Սարիար	261
ԸՆԴԱՄԵՆԸ	1354	ԸՆԴԱՄԵՆԸ	3691


Ուսումնասիրության ենթակա տարածքում բնակչության թվով ամենամեծ համայնքն Աշոցքն է (7638 մարդ), ամենափոքրը՝ Արփին (1354 մարդ), իսկ Ամասիան (4276 մարդ) և Սարապատը (3691 մարդ) զբաղեցնում են միջանկյալ դիրքեր:

Թիրախային տարածաշրջանի համայնքում բնակչության բնական աճի
ցուցանիշների շարժը 1990-2020թթ. ընթացքում⁵

Տարի	Ամասիա			Արփի			Աշոցք			Սարապատ		
	Ծնունդների թիվը	Մահերի թիվը	Բնական աճը	Ծնունդների թիվը	Մահերի թիվը	Բնական աճը	Ծնունդների թիվը	Մահերի թիվը	Բնական աճը	Ծնունդների թիվը	Մահերի թիվը	Բնական աճը
1990	125	0	125	57	0	57	204	0	204	102	0	102
1991	139	0	139	55	0	55	160	0	160	99	0	99
1992	106	0	106	41	0	41	157	0	157	88	0	88
1993	99	0	99	34	0	34	130	0	130	66	0	66
1994	82	0	82	42	0	42	118	0	118	67	0	67
1995	71	0	71	36	0	36	128	0	128	62	0	62
1996	78	0	78	41	0	41	111	0	111	82	0	82
1997	81	0	81	22	0	22	102	0	102	58	0	58
1998	66	0	66	24	0	24	85	0	85	60	0	60
1999	53	0	53	15	0	15	82	0	82	47	0	47
2000	42	0	42	9	0	9	81	0	81	43	0	43
2001	49	0	49	17	0	17	88	0	88	48	0	48
2002	33	0	33	16	0	16	76	0	76	40	0	40
2003	47	0	47	19	0	19	90	0	90	45	0	45
2004	48	0	48	14	0	14	91	0	91	44	0	44
2005	46	0	46	14	0	14	85	0	85	32	0	32
2006	53	0	53	13	0	13	104	0	104	29	0	29
2007	64	0	64	12	0	12	105	0	105	35	0	35
2008	65	0	65	13	0	13	111	0	111	41	0	41
2009	69	0	69	11	0	11	116	0	116	38	0	38
2010	61	0	61	14	0	14	108	0	108	36	0	36
2011	73	0	73	23	0	23	109	0	109	47	0	47
2012	77	1	76	18	0	18	106	0	106	49	1	48
2013	74	1	73	17	0	17	112	0	112	50	1	49
2014	77	0	77	21	0	21	110	0	110	52	1	51
2015	69	2	67	10	0	10	108	0	108	50	1	49
2016	61	2	59	16	0	16	98	2	96	58	6	52
2017	65	46	19	16	3	13	85	46	39	46	29	17
2018	42	28	14	13	1	12	76	63	13	27	24	3
2019	38	30	8	4	4	0	80	52	28	29	22	7
2020	20	30	-10	9	2	7	63	71	-8	30	25	5

⁵ Տվյալները վերցվել են միավորված համայնքերի պաշտոնական կայքերից

Բնակչության բնական աճը թիրախային տարածաշրջանի համայնքներում 1990-2020թթ. ընթացքում



Թիրախային տարածաշրջանի համայնքներում բնակչության բնական աճի հիմնական ցուցանիշների շարժընթացը ներկայացված է աղյուսակ 2-ում, իսկ սխեմատիկ պատկերը՝ սխեմա 1-ում: Այստեղ, ըստ տարիների, ներկայացված են 1990-2020թթ. ընթացքում արձանագրված ծնունդների թիվը, մահերի թիվը և այդ երկուսի տարբերությունը հանդիսացող բնակչության բնական աճը:

Տարածաշրջանի համայնքներում խիստ նվազել է ծնելիությունը: 1990թ. համեմատությամբ 2020թ. ծնելիությունն Ամասիայում նվազել է 6.25 անգամ, Արփիում՝ 6.33 անգամ, Աշոցքում՝ 3.24 անգամ, իսկ Սարապատում՝ 3.4 անգամ: Նույն ժամանակահատվածում էականորեն աճել է մահացությունը:

Բերված տվյալներից երևում է, որ անցած 30 տարիների ընթացքում, բոլոր չորս միավորված համայնքներում բնակչության բնական աճն էականորեն նվազել է, բայց դա խիստ արտահատված է հատկապես վերջին 5 տարիների ընթացքում, իսկ 2020 թվականին դա հասել է իր ծայրահեղ դրսևորմանն Ամասիա և Աշոցք համայնքներում, երբ մահացությունը գերազանցել է ծնելիությունը, և բնական աճի ցուցանիշը դարձել է բացասական: Պարզ է, որ, ի թիվս այլ գործոնների, դրա վրա իր էական ազդեցություններն են ունեցել նաև 2020թ. արձանագրված կորոնավիրուսային համավարակը և երկրորդ արցախյան պատերազմը:


Խիստ մտահոգիչ են վերջին հինգ տարիների ընթացքում թիրախային տարածաշրջանում բնակչության բնական աճի խիստ նվազման միտումները, որոնք կապված են ոչ միայն միգրացիայի և ծնելիության նվազման, այլ նաև համայնքների միավորման բացասական ազդեցության հետ, չնայած այս պնդումը լրացուցիչ ուսումնասիրության և ճշգրտման կարիք ունի:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Թիրախային տարածքի համայնքների ժողովրդագրական տվյալներն ըստ բնակչության սեռահասակային խմբերի

Համայնքի անվանումը	Բնակչության Քանակը	Բնակչության քանակն ըստ սեռի, %		Բնակչության քանակն ըստ տարիքային խմբերի, %				Բնակչության դեմոգր. միջին տարիքը
		Արական	Իգական	Մինչև 17 տարեկան	18–40 տարեկան	41–65 տարեկան	66 տարեկան և բարձր	
ԱՄԱՍԻԱ	4276	52.6%	47.4%	17.77%	36.48%	35.76%	9.99%	39.74
ԱՐՓԻ	1354	55.8%	44.2%	12.27%	42.42%	37.84%	7.47%	40.26
ԱՇՈՑՔ	7638	53.3%	46.7%	21.07%	37.06%	33.87%	8.00%	37.39
ՍԱՐԱՊԱՏ	3691	52.3%	47.7%	18.50%	38.58%	34.06%	8.85%	38.26
ԸՆԴԱՄԵՆԸ	16.959	53.5%	46.5%	18.73%	37.72%	34.85%	8.70%	38.91


**Թիրախային համայնքներում բնակչության բաշխվածությունն
ըստ սեռային պատկանելության**



Բերված տվյալներից երևում է, որ տարածաշրջանի բոլոր համայնքներում արական սեռի ներկայացուցիչների քանակը գերակշռում է իգականին և երբեմն այդ տարբերությունը բավականին մեծ է, օրինակ Արփի համայնքում այն կազմում է 11,6%, իսկ Ամասիա, Աշոց և Սարապատ համայնքներում՝ 4.6-6.6%:

Թիրախային տարածաշրջանում առկա ժողովրդագրական իրավիճակի նկատելի հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը վերջին տասնամյակում գնալով էլ ավելի է արագացել: Բնակչության ծերացումը կամ այսպես կոչված ժողովրդագրական ծերացումը, երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև, մասամբ միգրացիայի հետևանք է: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե բնակչության կառուցվածքում 65-ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող:

Թիրախային համայնքներում բնակչության բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի



Ըստ բնակչության ժողովրդագրական ծերացման ցուցանիշի՝ թիրախային տարածաշրջանի բոլոր համայնքները համարվում են ծերացող, բայց այդ առումով առավել խոցելի համայնք է Ամասիան, որտեղ 65-ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 10%: Մյուս համայնքներում այդ ցուցանիշը կազմում է. Սարապասում՝ 8.9%, Աշոցքում՝ 8.0%, իսկ Արփիում՝ 7.5%:

2.4 Գործող հիմնական կառույցները և տնտեսության նկարագիրը

Տարածաշրջանում տնտեսության զարգացման ամենաառաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, որի վերաբերյալ ավելի մանրամասն կներկայվի վերլուծության հաջորդ բաժիններում:

Զարգացած է նաև կաթի վերամշակման և պանրի արտադրության ուղղությունները: Տարածաշրջանում գործում են կաթի վերամշակման խոշոր ձեռնարկություններ՝ Բանդիվան, Ամասիա, Արդենիս, Մուսայելյան և այլ բնակավայրերում, ինչպես նաև կաթի հավաքման կետեր (Աշոցք, Ծաղկուտ և այլն) և կաթնամթերքների փոքր արտադրություններ: Արփի համայնքում գործում է նաև

խոգաբուժական բավականին մեծ մասնագիտացված տնտեսություն, Ամասիայում՝ բրդի վերամշակման գործարան, Բավրայում՝ հնդկաձավարի վերամշակման գործարան, միջին չափի մի քանի տավարաբուժական ֆերմաներ (Մեծ Սեպասար, Բավրա, Աշոցք) և այլն: Արեգնադեմ բնակավայրում ներկայումս ընթացքի մեջ է սպանդանոցի և ժամանակակից սանիտարական պահանջներին համապատասխանող անասնագոմի շինարարությունը, որոնք կավարտվեն մինչև այս տարվա վերջ:

Թիրախային տարածաշրջանի Արեգնադեմ, Գտաշեն, Ամասիա, Մեղրաշեն, Բերդաշեն, Ծաղկուտ, Ալվար, Աղվորիկ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Զույգաղբյուր և Հարթաշեն բնակավայրերում գործում են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնք, պետության կողմից համաֆինանսավորմամբ տրամադրված գյուղատնտեսական տեխնիկայով, որոշակի գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ծառայություններ են մատուցում գյուղացիական տնտեսություններին, հատկապես՝ հողամշակության, խոտհնձի և արոտների արդյունավետ կառավարման բնագավառներում:

Բացի այդ, կան նաև տարածաշրջանում գործող այլ գյուղատնտեսական կոոպերատիվներ և անհատ ձեռնարկատերեր ևս, օրինակ՝ Բավրայում գործող «Նոր հատիկ» կոոպերատիվը, Սիգավետի՝ «Լատիֆ» ընտանեկան կոոպերատիվը, Արեգնադեմ և Բյուրակն համայնքների գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվները և այլն:

Ամասիա և Աշոցք համայնքներում գործում են նաև պետական մի շարք ծառայությունների և մասնավոր կառույցների տարածքային ստորաբաժանումներ՝ ոստիկանության, աշխատանքի և զբաղվածության, սոցիալական ապահովության, կադաստրի պետական կոմիտեի, բանկերի, «Վիոլիա ջուր» ՓԲԸ-ի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և այլն:

Գործում են նաև փոքր ու միջին ձեռնարկատիրական տարբեր կառույցներ՝ մեկ տասնյակից ավելի հացի արտադրամասեր, ավելի քան երեք տասնյակ մանրածախ առևտրի և հանրային սննդի օբյեկտներ, 3 գազալիցքավորման կայան, մոտ մեկ տասնյակ հեղուկ վառելիքի լիցքավորման կետեր և այլն:


Տարածաշրջանում կան նաև գործող քաղաքացիական հասարակության կառույցներ. «Լեջամե» հիմնադրամը, «Ամասիա» համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ-ն, «Հյուսիսի երիտասարդներ» ՀԿ-ն, «Սարապատ» ՀԿ-ն, «Համայնք հանուն խաղաղության և զարգացման» ՀԿ-ն, «Հողմիկ» հասարակության զարգացման բազմագործառույթ կենտրոն» ՀԿ-ն, ինչպես նաև մի շարք երիտասարդական ոչ ֆորմալ խմբեր, երիտասարդական ծխական խորհուրդներ, գյուղական կանանց խմբեր և այլն: Բայց պետք է նշել, որ այս տարածաշրջանում ՔՀԿ-ների գործունեությունը

բավականին պասիվ ու թույլ է, և դրանց գործունեության աշխուժացման համար էական աջակցության անհրաժեշտություն կա:

Թիրախային տարածաշրջանում երկար տարիներ գործունեություն են իրականացնում՝ «Կարիտաս» ԲՀԿ-ն, «Համայնքների զարգացման հիմնադրամ»-ը, «Հայաստանի մանուկների հիմնադրամ»-ը, «Վորլդ Վիժն-Հայաստան» կազմակերպությունը, «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն, ինչպես նաև միջազգային և տեղական բազմաթիվ այլ կազմակերպություններ ու կառույցներ:

2009թ.-ից տարածաշրջանում գործում է «Արփի լիճ» ազգային պարկը, որը զբաղեցնում է ավելի քան 25.000 հա տարածք, և որի ստեղծման գլխավոր նպատակը Ջավախք-Շիրակ բարձրավանդակի ուրույն կենսաբազմազանության պահպանությունն է:

Թիրախային տարածաշրջանն ընդհանուր առմամբ զբաղեցնում է 114691.72 հա տարածք, այդ թվում.



Թիրախային տարածաշրջանում ամենամեծ տարածքը զբաղեցնում են Արփի և Աշոցք համայնքները, բայց դրանց զգալի հատվածներ մտնում են «Արփի լիճ» ազգային պարկի մեջ և կառավարվում են այդ կառույցի կողմից: Տարածաշրջանում զբաղեցրած տարածքով ամենափոքր համայնքն Ամասիան է, որն ունի ընդամենը 20.468 հա տարածք:

Աղյուսակ 4-ում ներկայացվում է թիրախային տարածաշրջանի համայնքների որոշ բնութագրական ցուցանիշներ, որոնք ցույց են տալիս, որ տարածաշրջանում շատ

փոքր է բնակչության խտությունը: Աշոցք համայնքում բնակչության խտությունը կազմում է 26.9 մարդ/կմ², Ամասիայում՝ 20.89 մարդ/կմ², Սարապատում՝ 13.44 մարդ/կմ², իսկ Արփի համայնքում՝ ընդամենը 3.53 մարդ/կմ²:

ԱՂՅՈՒՄԱԿ 4

**Թիրախային տարածքի համայնքների որոշ բնութագրական ցուցանիշները,
սառ 01.01.2020թ.**

Համայնքի անվանումը	Բնակավայրերի քանակը	Վարչական տարածքը (հա)	Բնակչության քանակը (Մարդ)	Բնակչության խտությունը, (Մարդ/քառ.կմ)	Տնային տնտեսությունների քանակը	Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	Կրթական հաստատությունների քանակը
ԱՄԱՍԻԱ	9 (10) ⁶	20468.30	4276	20.89	1381	172	18
ԱՐՓԻ	9 (15)	38361.00	1354	3.53	397	15	10
ԱՇՈՑՔ	11	28397.08	7638	26.90	1488	153	15
ՍԱՐԱՊԱՏ	14 (15)	27465.34	3691	13.44	913	66	14
ԸՆԴԱՄԵՆԸ	43 (51)	114691.72	16959	14.79	4179	406	57

Համեմատության համար նշենք, որ Շիրակի մարզում բնակչության միջին խտությունն, ըստ Հայաստանի վիճակագրական ծառայության 2020թ. տվյալների, կազմում է 86 մարդ/կմ²:

2.5 Կառավարումը և քաղաքացիական ակտիվության բնութագիրը

Համայնքների կառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին ու համայնքի ղեկավարը:

Տարածաշրջանում տեղական ինքնակառավարման կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որ ավագանին, որպես ներկայացուցչական մարմին իր կազմում չունի անդամներ համայնքի մեջ մտնող բոլոր բնակավայրերից: Ավագանու անդամների գերակշիռ մասը խոշոր բնակավայրերից են, իսկ համեմատաբար փոքր համայնքներն ավագանիների կազմում ներկայացված չեն: Ավագանու անդամներից շատերը որոշում կայացնելուց քվեարկում են առանց քննարկվող փաստաթղթերին ծանոթ լինելու, և

⁶Փակագծերում ներկայացված է համայնքի բոլոր բնակավայրերի գումարային քանակը, այդ թվում՝ հաշվի առնելով սակավ բնակեցված կամ ոչ մշտապես բնակեցված բնակավայրերը:

ընդհանրապես տեղական ինքնակառավարման գործընթացում ավագանիների իրական դերակատարությունը շատ փոքր է:

Աղյուսակ 5-ում ներկայացված են թիրախային տարածաշրջանի համայնքերի ՏԻՄ-երը բնութագրող որոշ համեմատական ցուցանիշներ, որոնք ցույց են տալիս ավագանու անդամների քանակը, համայնքապետարանի աշխատակիցների քանակը և ապարատի պահպանման ծախսերը:

ԱՂՅՈՒՍԱԿ 5

**Թիրախային տարածաշրջանի համայնքերի ՏԻՄ-երը
բնութագրող որոշ համեմատական ցուցանիշներ**

Համայնքի անվանումը	Ավագանու անդամների քանակը, մարդ	Համայնքապետանի աշխատակիցների քանակը, մարդ	Ապարատի պահպանման ծախսերը, Հազար դրամ	Համայնքապետանի մեկ աշխատակցի հաշվով տարեկան ծախսվող գումարը, Հազար դրամ
ԱՄԱՍԻԱ	10	40	49780.7	1244.5
ԱՐՓԻ	7	19	63983.7	3367.6
ԱՇՈՑՔ	11	40	70156.6	1753.9
ՍԱՐԱՊԱՏ	9	41	71096.0	1734.0

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ապարատի պահպանման ծախսերը թիրախային համայնքների համայնքապետարանների մեկ աշխատակցի հաշվով իրարից խիստ տարբեր են: Եթե Ամասիա համայնքում այն կազմում է 1244.5 հազար դրամ, Աշոցք և Սարապատ համայնքներում՝ համապատասխանաբար 1753.9 և 1734.0 հազար դրամ, ապա Արփի համայնքում ապարատի պահպանման ծախսերը համայնքապետարանի մեկ աշխատակցի հաշվով կազմում է 3367.6 հազար դրամ, ինչն Աշոցք և Սարապատ համայնքների նույն ցուցանիշները գերազանցում է ավելի քան 1,9 անգամ, իսկ Ամասիա համայնքի նույն ցուցանիշը՝ 2.7 անգամ:

Թիրախային տարածաշրջանում համայնքային կենտրոնները բնակավայրերին կապող միջբնակավայրային ճանապարհները հիմնականում խճապատ են կամ հողային և մեծամասամբ գտնվում են անբարեկարգ վիճակում: Վատ սպասարկման պատճառով դրանց առանձին հատվածներ դժվար անցանելի են, իսկ ձմռան ժամանակահատվածում երբեմն նաև անանցանելի: Ճանապարհային երթևեկության նշանները շատ քիչ են կամ բացակայում են: Միջբնակավայրային հասարակական տրանսպորտ չի գործում, առկա են միայն համայնքային կենտրոնները և որոշ բնակավայրեր մարզկենտրոնի հետ կապող հասարակական տրանսպորտային գծեր: Համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակչությունը հասարակական տրանսպորտով տեղաշարժվելու սահմանափակ հնարավորություններ ու լուրջ դժվարություններ ունի:

2.6 Տարածաշրջանի SWOT վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Տարածաշրջանը սիրող և նվիրված, զարգացման տրամաբանություն և ցանկություն ունեցող աշխատունակ բնակչության առկայությունը, 2. Գյուղատնտեսական նշանակության բավականին շատ, թունայությունից զերծ և բարվոք վիճակում գտնվող հողային ռեսուրսների առկայությունը, 3. Խմելու և ոռոգման համար բավարար քանակի և որակի ջրային պաշարների առկայությունը, 4. Կայուն և օրգանական գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր բնակլիմայական պայմանների առկայությունը, 5. Բավարար քանակությամբ արտադրյալների և խոտհարքների առկայությունը, 6. Անասնապահության վարման երկարամյա մշակույթը և կենդանական ծագման մթերքների արտադրության մեծ ծավալները, 7. Էկոլոգիապես մաքուր ալպյան մարգագետինները, գեղատեսիլ և բազմազան բնական լանդշաֆտների առկայությունը, 8. Հարուստ կենսաբազմազանությունը և «Արփի լիճ» ազգային պարկի առկայությունը, 9. Տարածաշրջանում բնության և պատմաճարտարապետական հուշարձանների, կոթողների, հնագույն բնակատեղիների, կիկլոպյան ամրոցների և այլ մշակութային վայրերի առկայությունը, 10. Հանքահումքային պաշարների առկայությունը, 11. Բնակավայրերում համայնքապետական տարածքների և շինությունների առկայությունը, 12. Զբոսաշրջության տարբեր ուղղությունների զարգացման համար անհրաժեշտ բազային ռեսուրսների և հնարավորությունների առկայությունը, 13. Միջպետական նշանակության ճանապարհի առկայությունը և դրան մոտ գտնվելը, 14. Գյուղատնտեսական մթերքի համամետաքար մոտ գտնվող սպառման շուկայի առկայությունը, 15. Վերականգնվող էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմանները, արեգակնային ճառագայթման բարձր ներուժը և կենսազանգվածի մեծ հնարավորությունները:	1. Համեմատաբար խիստ բնակլիմայական պայմանները և կլիմայի փոփոխության հարմարվողականության ցածր մակարդակը, 2. Համայնքներում կենսապայմանների ցածր մակարդակը և բնակչության շարունակական արտագաղթը, 3. Համայնքային իշխանությունների կողմից իրավիճակի ոչ ճիշտ գնահատումը, զարգացման ոչ արդյունավետ ծրագրերի առկայությունը և դրանց իրականացման արհեստավարժ աշխատակազմերի և գործուն մեխանիզմների բացակայությունը, 4. Համայնքային ռեսուրսների և բյուջեների միջոցների ոչ արդյունավետ օգտագործումը, 5. Համայնքների կառավարման գործընթացներում բնակչության ցածր ներգրավվածությունը, որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու մոտիվացիայի պակասը, 6. Բնակչության զբաղվածության և սոցիալական ապահովության ցածր մակարդակը, 7. Համայնքային ենթակայության հասարակական նշանակության կառույցներում բնակչությունը միմիմալ պայմաններով ապահովվածության պակասը և տարվա ցուրտ հատվածում դրանց գործարկման դժվարությունները, 8. Խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, ջրահեռացման կենտրոնացված համակարգերի և մաքրման կայանների բացակայությունը, 9. Ճանապարհային և փողոցային ցանցերի անբարեկարգ վիճակը և հասարակական տրանսպորտի հասանելիության դժվարությունները, 10. Բնակավայրերում հասարակական և մշակութային կյանքը լիարժեք կազմակերպելու համար համապատասխան վայրերի և ենթակառուցվածքների բացակայությունը, 11. Աղբահանության բացակայությունը կամ կազմակերպման փոքր ծավալներն ու ցածր մակարդակը, 12. Տարածաշրջանում սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրի և սան. մաքրման արդյունավետ կազմակերպման տեխնիկական բազայի բացակայությունը, 13. Կայուն գյուղատնտեսության վարման փոքր կարողությունները և գիտելիքների ցածր մակարդակը, 14. Ոռոգման ցանցի փոքր ծավալները և ներհամայնքային ու ներբնակավայրային ոռոգման ենթակառուցվածքների բացակայությունը, 15. Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը, 16. Գյուղ. մթերքների իրացման ցածր կարողությունները և շուկա հասանելիության դժվարությունները:

Հնարավորություններ	Սպառնալիքներ
1. Համայնքի զարգացման ցանկությունը և ՏԻՄ-երի գործունեության հիմքում զարգացման տրամաբանության ներդրումը, 2. Համայնքի առկա մարդկային, գույքային ու ֆինանսական ռեսուրսները, ճիշտ գնահատել առկա իրավիճակը, մշակել ու իրականացնել համայնքի զարգացման արդյունավետ ծրագրեր, 3. Զարգացնել համայնքի արդյունավետ ծրագրեր մշակելու կարողությունները, ներգրավել անկախ փորձագետներ և հնարավորինս մեծացնել պետական աղբյուրներից, միջազգային և տեղական կազմակերպություններից համայնքի զարգացման համար ներգրավվող միջոցները, 4. Խթանել որակյալ մասնագետների հոսքը համայնքների աշխատակազմեր և կառույցներ՝ հնարավորինս ընդլայնել մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, բարձրացնել դրանց որակը, արդյունավետությունն ու հասանելիության մակարդակը, 5. Ներդնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության (հատկապես՝ տուրիզմ, գյուղատնտեսություն, փոքր և միջին արտադրություններ և այլն) խրախուսմանն ուղղված տարբեր մեխանիզմներ՝ բարձրացնելով համայնքի սեփական ռեսուրսների և ֆինանսական միջոցների բաժնեմասը, 6. Նպաստել համայնքի մեջ մտնող բնակավայրերի համաչափ զարգացմանը և համայնքի սոցիալ-տնտեսական մրցունակության ու գրավչության մակարդակի բարձրացմանը, 7. Նպաստել համայնքների ավագանիների կազմերում երիտասարդ և բանիմաց մարդկանց ներգրավվածության և համայնքի մասնակցային կառավարման արդյունավետության մեծացմանը, 8. Տարածաշրջանում խթանել կայուն և օրգանական գյուղատնտեսության զարգացումը, նոր տեխնոլոգիաների կիրառությունը և էկոլոգիապես անվտանգ սննդամթերքների արտադրությունը, 9. Նպաստել համայնքում բնակչության էներգետիկ կայունության և անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ խթանելով էներգիայի և էներգակիրների տեղական աղբյուրների օգտագործումը: 10. Բարձրացնել համայնքների և տեղական կազմակերպությունների, արտաքին աշխարհի հետ նոր կապեր ու համագործակցություն ստեղծելու և գործընկերային հարաբերություններ կառուցելու կարողությունները:	1. Համայնքի երիտասարդների արտագաղթը և արտագնա աշխատանքը բնակչության եկամուտների հիմնական աղբյուր դիտարկելու վտանգավոր գործելակերպը, 2. Փոքր բնակավայրերից բնակիչների արտահոսքը դեպի համայնքի կենտրոն կամ այլ բնակավայրեր, 3. Համայնքային կենտրոնների զարգացմանը մեծ ուշադրություն և միջոցներ տրամադրելը՝ ի հաշիվ համայնքի ավելի փոքր բնակավայրերի, 4. Համայնքի բնակիչների անվտանգությունը և թերահավատությունը ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ, առավել վատ դեպքերում հիասթափությունը և անտարբերությունը: 5. Տարբեր բնական աղետները, կլիմայական բացասական դրսևորումները և համայնքի դիմակայունության ցածր մակարդակը: 6. Կլիմայի փոփոխության արդյունքում ջերմաստիճանի բարձրացումը, հողերի դեգրադացիան, ջրային պաշարների նվազումը, անտառային և դաշտային հրդեհների հաճախացումը, կարկտահարության, ցրտահարության, հեղեղումների դեպքերի աճը, ուժեղ քամիները և համայնքների ԿՓ հարմարավորականության կարողությունների ցածր մակարդակը, 7. Տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման արդյունքում բնության ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների ավելացումը և համայնքի դրանց մեղմման կարողությունների ցածր մակարդակը, 8. Գյուղատնտեսության ոլորտի զարգացման արդիական տեխնոլոգիաների ներդրման հապաղումը, ոլորտի տնտեսական արդյունավետության նվազումը և գյուղատնտեսական հողերի զանգվածային օտարումները, 9. Մարդկանց և կենդանիների տարբեր հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը:

3. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԳՐՈՌԵՍՈՐՄՆԵՐՆ Ու ԱԳՐՈՎԼԻՄԱՑԱԿԱՆՊԱՑՄԱՆՆԵՐԸ

Թիրախային տարածաշրջանում տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, հատկապես անասնապահությունը, իսկ ավելի կոնկրետ՝ կաթնատու և մսատու տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը: Բնակչությունը զբաղվում է նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, հացահատիկային, կերային և որոշ տեխնիկական մշակաբույսերի աճեցմամբ: Պետք է նշել, որ տարածաշրջանում անասնապահությամբ զբաղվում են տնային տնտեսությունների ավելի քան 90%-ը, իսկ բուսաբուծությունը համեմատաբար թույլ է զարգացած, չի համարվում գյուղատնտեսության բարձր եկամտաբեր ճյուղ և փոքր ներդրում ունի ոլորտի համախառն արտադրանքում: Բուսաբուծությունից ստացվող եկամուտները կազմում են բնակչության ամբողջ եկամուտների ոչ ավելի քան 10-15%-ը: Տարածաշրջանում առանձնապես թույլ են զարգացած պտղաբուծությունն ու հատապտղագործությունը, որոնք ողջ աշխարհում համարվում են բուսաբուծության ամենաեկամտաբեր և քիչ ներդրումներ պահանջող ուղղությունները: Պտղաբուծությամբ փոքր ծավալներով զբաղվում են տարածաշրջանի հարավային ցածրադիր բնակավայրերում, իսկ արդյունագործական հատապտղագործությունն այս տարածաշրջանում դեռևս նոր սկզբնավորվող, բայց շատ հեռանկարային ուղղություն է:

3.1 Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսները

Ըստ պաշտոնական տվյալների՝ ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը 2020թ.⁷ տարեսկզբի դրությամբ զբաղեցել են 210876.8 հա, որից վարելահողերը կազմել են 78143.0 հա կամ 37.05%:

Թիրախային տարածաշրջանի համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերը 2020թ. տարեսկզբի դրությամբ զբաղեցնում են 85321.27 հա տարածք, որը կազմում է մարզի ամբողջ գյուղատնտեսական նշանակության հողերի 40.46%-ը :

Թիրախային տարածաշրջանի չորս համայնքներում միասին վերցված, առկա է 25547.73 հա վարելահող, որը կազմում է Շիրակի մարզի ողջ վարելահողերի 32,7%-ը:

Ինչպես երևում է աղյուսակ 6-ում բերված տվյալներից, թիրախային տարածաշրջանի համայնքների զբաղեցրած տարածքներում բավականին բարձր են գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը, միջին հաշվով այն կազմում է 74.4%: Այդ թվում, Ամասիա համայնքի տարածքում գյուղ. նշանակության հողերի մասնաբաժինը կազմում է 90.2%, Արփիում՝ 54.4%, Աշոցքում՝ 73.6%, իսկ Սարապատում՝ 91.4%: Արփի համայնքում գյուղ. նշանակության հողերի

⁷<https://armstat.am/file/doc/99521573.pdf>

համեմատաբար ցածր մասնաբաժինը պայմանավորված է նրանով, որ համայնքի տարածքում է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկը, որն Արփի համայնքում ավելի քան 15.000 հա տարածք է զբաղեցնում:

ԱՂՅՈՒՄԱԿ 6

Թիրախային համայնքների տարածքներում գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը, առ 01.01.2020թ.

Համայնքի անվանումը	Զբաղեցրած ողջ տարածքը (հա)	Գյուղատնտեսական նշանակության հողերը (հա)	Համայնքի հողերում գյուղ. նշանակության հողերի մասնաբաժինը, %
ԱՄԱՍԻԱ	20468.30	18453.72	90.2%
ԱՐՓԻ	38361.00	20863.33	54.4%
ԱՇՈՑՔ	28397.08	20910.69	73.6%
ՍԱՐԱՊԱՏ	27465.34	25093.53	91.4%
ԸՆԴԱՄԵՆԸ	114691.72	85321.27	74.4%

Բերված տվյալները ցույց են տալիս, որ թիրախային տարածաշրջանի համայնքները բավականին հարուստ են գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսներով, և դրանց մակերեսները բավարարում են տարածաշրջանում և՛ անասնաբուծության, և՛ բուսաբուծության ոլորտների հետագա զարգացման և ընդլայնման համար:

Ինչպես երևում է աղյուսակ 7-ում բերված տվյալներից, տարածաշրջանի գյուղատնտեսական նշանակության հողերում մեծ տեղ են զբաղեցնում կերահանդակները, այսինքն՝ արոտավայրերն ու խոտհարքները, բավականին շատ են վարելահողերը, իսկ գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերն ու բազմամյա տնկարկները զբաղեցնում են շատ փոքր մակերեսներ:

ԱՂՅՈՒՄԱԿ 7

Թիրախային տարածաշրջանի համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվեկշիռն ըստ հողատեսքերի, առ 01.01.2020թ.

N	Համայնքի անվանումը	Ընդամենը գյուղ. նշանակության հողեր (հա)	Վարելահողեր (հա)	Այդ թվում ոռոգվող (հա)	Բազմամյա տնկարկներ(հա)	Խոտհարքներ (հա)	Արոտներ (հա)	Գյուղ. նշ. այլ հողատեսքեր (հա)
1.	Ամասիա	18453.72	6448.80	1234.5	5.86	1541.33	9368.53	1089.20
2.	Արփի	20863.33	5939.13	0	0	2748.92	11524.75	650.53
3.	Աշոցք	20910.69	7891.48	0	0	2450.43	9946.46	622.32
4.	Սարապատ	25093.53	5268.32	31.6	5.49	1803.04	16855.66	1161.02
	ԸՆԴԱՄԵՆԸ	85321.27	25547.73	1266.10	11.35	8543.72	47695.40	3523.07

Թիրախային տարածաշրջանում արոտավայրերը կազմում են ամբողջ գյուղատնտեսական հողերի 55.90%-ը, վարելահողերը՝ 29.94%-ը, խոտհարքները՝ 10.01%-ը, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը՝ 4.13%-ը, իսկ բազմամյա տնկարկները՝ ընդամենը 0.01%-ը (Աղյուսակ 8 և սխեմա 5):


ԱՂՅՈՒՄԱԿ 8

Թիրախային տարածաշրջանի միավորված համայնքներում տարբեր հողատեսքերի մասնաբաժինը գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքում, %

N	Միավորված համայնքի անվանումը	Վարելահողեր (%)	Բազմամյա տնկարկներ (%)	Խոտհարքներ (%)	Արոտներ (%)	Գյուղ. նշանակության այլ հողատեսքեր (%)
1.	Ամասիա	34.95	0.03	8.35	50.77	5.90
2.	Արփի	28.47	0.00	13.18	55.24	3.12
3.	Աշոցք	37.74	0.00	11.72	47.57	2.98
4.	Սարապատ	20.99	0.02	7.19	67.17	4.63
	ԸՆԴԱՄԵՆԸ	29.94	0.01	10.01	55.90	4.13

ՍԽԵՄԱ 5

Թիրախային տարածաշրջանի միավորված համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքն ըստ հողատեսքերի, առ 01.01.2020թ.



Ամասիա համայնքում կերահանդակները կազմում են ամբողջ գյուղատնտեսական նշանակության հողերի 59.12%-ը, Աշոցքում՝ 59.29%-ը, Արփիում՝ 68.42%-ը, իսկ Սարապատում՝ 74.36%-ը: Սա ցույց է տալիս, որ այս համայնքներում անասնաբուծության զարգացման համար կան շատ լավ նախադրյալներ:

Աշոցք համայնքում վարելահողերը կազմում են ամբողջ գյուղատնտեսական նշանակության հողերի 37.7%-ը, Ամասիայում՝ մոտ 35%-ը, Արփիում՝ մոտ 28.5%-ը, իսկ Սարապատ համայնքում՝ մոտ 21%-ը:

Ընդհանուր առմամբ վարելահողերը կազմում են թիրախային տարածաշրջանի գյուղատնտեսական բոլոր հողերի 29.94%-ը, որը բավականին բարձր ցուցանիշ է, եթե հաշվի առնենք նաև տարածաշրջանի կտրտված ռելիեֆը և բարձր լեռնային տեղադիրքը: Համեմատության համար նշենք, որ Հայաստանի Հանրապետության մակարդակով վարելահողերը կազմում են ամբողջ գյուղատնտեսական հողերի ընդամենը 21,8%-ը:

Ուշագրավ փաստ է, որ թիրախային տարածաշրջանի համայնքներում խիստ ցածր է ոռոգվող վարելահողերի քանակը և կազմում է տարածաշրջանի ամբողջ վարելահողերի ընդամենը 4.96%-ը: Ամասիա համայնքում ոռոգվող վարելահողերի քանակը կազմում է 19.14%, Սարապատ համայնքում՝ 0,6%, իսկ Արփի և Աշոցք համայնքներում ոռոգվող վարելահողերը գրեթե բացակայում են, չնայած նրան, որ այդ համայնքներում առկա են ոռոգման համար բավարար ջրային պաշարներ (*Աղյուսակ 7*):

Տարածաշրջանի հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար կարևոր ցուցանիշ է չմշակվող գյուղատնտեսական հողերի քանակը, որը հետազոտվող տարածաշրջանում կազմում է 850.1 հա, որից 759.8-ը՝ վարելահող է, 59.4-ը՝ խոտհարք, 30.5-ը՝ արոտ և 0.4-ը՝ գյուղատնտեսական նշանակության այլ հողեր (*Աղյուսակ 9*):

Նշված քանակությունից Ամասիա համայնքում չմշակվող գյուղ. նշանակության հողերը կազմում են 138.6 հա, իսկ Սարապատ համայնքում՝ 13.2 հա, որոնք ամբողջությամբ վարելահողեր են: Աշոցք համայնքում չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 698.3 հա, որից 608.0-ը՝ վարելահող, 59.4-ը՝ խոտհարք, 30.5-ը՝ արոտ և 0.4-ը՝ գյուղ. նշանակության այլ հողեր: Արփի համայնքում գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերն ընդհանրապես բացակայում են:

Թիրախային տարածաշրջանում առկա 85321.27 հա գյուղատնտեսական նշանակության հողերից չի մշակվում 850.1 հա-ն, որը կազմում է դրանց մոտ 1%-ը: Բայց Շիրակի մարզի համար դա բավականին բարձր ցուցանիշ է, քանի որ ողջ մարզում կան ընդամենը 1706.2 հա չմշակվող հողեր (*Աղյուսակ 9*), որոնք կազմում են մարզի ողջ գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը 0,81%-ը: Թիրախ տարածաշրջանում առկա չմշակվող հողերը կազմում են Շիրակի մարզի չմշակվող հողերի մոտ կեսը՝ 49,82%-ը: Դրանց 93.6%-ը հանդիսանում է քաղաքացիների, իսկ 6.4%-ը՝ իրավաբանական անձանց սեփականություն (*Աղյուսակ 10*):

**ՀՀ Շիրակի մարզում չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը
ըստ պատկանելիության և դրանց չմշակման պատճառների
01.01.2020թ. դրությամբ**

#	Հողերի չմշակման պատճառները	Քաղաքացիների սեփականության չմշակվող հողեր, հա					Իրավաբանական անձանց սեփականության չմշակվող հողեր, հա					Ընդամենը չմշակվող հողեր
		Վարելա- հող	Բազմամյա տնկարկ	Խոտհարք	Արոտ	Այլ հողեր	Վարելա- հող	Բազմամյա տնկարկ	Խոտհարք	Արոտ	Այլ հողեր	
1.	Ցածր եկամտաբերությունը	811.5	0.0	9.0	0.0	0.0	10.1	0.0	0.0	0.0	0.0	830.6
2.	Շրջանառու միջոցների բացակայությունը	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0
3.	Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիությունը	45.5	0.0	26.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	71.5
4.	Ոռոգման ջրի անհասանելիությունը կամ անբավարար մատակարարումը	105.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	105.0
5.	Հողի բերրիության ցածր մակարդակը	238.7	0.0	7.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	246.0
6.	Որակյալ սերմի ու տնկանյութի անմատչելիությունը և/կամ բարձր գինը	135.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	135.0
7.	Պարարտանյութի բարձր գինը	62.2	0.0	4.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	66.7
8.	Սեփականատիրոջ բացակայությունը	103.7	0.0	3.5	0.0	0.0	4.3	0.0	9.1	30.5	0.4	151.4
ԸՆԴԱՄԵՆԸ		1601.5	0.0	50.3	0.0	0.0	14.4	0.0	9.1	30.5	0.4	1706.2

**Թիրախային տարածքում չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսն
ըստ պատկանելիության և դրանց չմշակման պատճառների
01.01.2020թ. դրությամբ**

#	Հողերի չմշակման պատճառները	Քաղաքացիների սեփականության չմշակվող հողեր, հա					Իրավաբանական անձանց սեփականության չմշակվող հողեր, հա					Ընդամենը չմշակվող հողեր
		Վարելա- հող	Բազմամյա տնկարկ	Խոտհարք	Արոտ	Այլ հողեր	Վարելա- հող	Բազմամյա տնկարկ	Խոտհարք	Արոտ	Այլ հողեր	
1.	Ցածր եկամտաբերությունը	502.7	0.0	9.0	0.0	0.0	10.1	0.0	0.0	0.0	0.0	521.8
2.	Շրջանառու միջոցների բացակայությունը	15.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	15.0
3.	Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիությունը	31.0	0.0	26.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	57.0
4.	Ոռոգման ջրի անհասանելիությունը կամ անբավարար մատակարարումը	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
5.	Հողի բերրիության ցածր մակարդակը	157.0	0.0	7.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	164.3
6.	Որակյալ սերմի ու տնկանյութի անմատչելիությունը և/կամ բարձր գինը	5.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.0
7.	Պարարտանյութի բարձր գինը	5.0	0.0	4.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	9.5
8.	Սեփականատիրոջ բացակայությունը	29.7	0.0	3.5	0.0	0.0	4.3	0.0	9.1	30.5	0.4	77.4
ԸՆԴԱՄԵՆԸ		745.4	0.0	50.3	0.0	0.0	14.4	0.0	9.1	30.5	0.4	850.1

Թիրախային տարածաշրջանում չմշակվող հողերի գերակշիռ մասը՝ 89.47%-ը, վարելահողեր են, 7.0%-ը՝ խոտհարքներ և 3.6%-ը՝ արոտավայրեր: Հողերի չմշակման հիմնական պատճառները դրանց ցածր եկամտաբերությունն է (61.4%), հողի բերրիության ցածր մակարդակը (19.3%), սեփականատիրոջ բացակայությունը (9.3%) և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման անմատչելիությունը (6.7%): Հողերը չմշակելու մյուս պատճառներն ունեն շատ փոքր մասնաբաժիններ:

Ամփոփելով Շիրակի մարզի Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների համայնքների գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների թվային տվյալները՝ կարելի է ասել, որ Թիրախային համայնքները բավականին հարուստ են գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսներով և տարածաշրջանն ունի անասնաբուծության և բուսաբուծության զարգացման համար բավարար հողային պաշարներ: Առկա գյուղատնտեսական նշանակության հողերի գերակշիռ մասը կազմում են կերահանդակներն(65,91%) ու վարելահողերը(29.94%), իսկ չմշակվող հողերի քանակը բավականին փոքր է և կազմում է տարաշաճրջանի ողջ գյուղատնտեսական նշանակության հողերի մոտ 1%-ը:

3.2 Անասնապահությունը

Թիրախային տարածաշրջանի առավել զարգացած ճյուղն անասնապահությունն է, որով զբաղվում են տնային տնտեսությունների ավելի քան 90%-ը: Առավել զարգացած ուղղություններն են՝ կաթնատու և մսատու տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը: Բայց գյուղացիական տնտեսությունների զգալի մասը զբաղվում է նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ, այծաբուծությամբ, ճագարաբուծությամբ և մեղվաբուծությամբ, քիչ քանակությամբ պահում են նաև ձիեր և ավանակներ:

Տարածաշրջանում առկա կերահանդակները, գրեթե միշտ, լիարժեք բավարարել են գյուղացիական տնտեսություններին գյուղատնտեսական կենդանիների արածեցման և կերապահովման համար, դեռ ավելին, համայնքների վարչական սահմաններում գտնվող շատ արոտներ վարձակալության են տրվել այլ համայնքների արոտօգտագործողների: Մասնավորապես, ամեն տարի այլ մարզերից այս տարածաշրջան են բերվում գյուղատնտեսական կենդանիների զգալի գլխաքանակներ՝ մոտ 20000գլ մանր եղջերավոր և 5000գլ խոշոր եղջերավոր կենդանիներ: Վերջին երկու տարիների ընթացքում, կլիմայի փոփոխության ազդեցության ուժգնացման պայմաններում, առաջացել են կենդանիների կերապահովման հետ կապված որոշակի խնդիրներ, հատկապես դա խիստ նկատելի է 2021թ., երբ կերահանդակների ցածր բերքատվության պատճառով առաջացել է կերապահովման ճգնաժամ, որը կարող է հանգեցնել զանգվածային մորթի, ինչի արդյունքում զգալիորեն կնվազեն վերարտադրության ծավալները և տարածաշրջանի անասնազվխաքանակը:

Այժմ ներկայացնենք Թիրախ տարածաշրջանում անասնաբուծության տարբեր ուղղությունների հակիրճ նկարագիրն ու ծանոթանանք դրանց վարման առանձնահատկություններին:

Տավարաբուծություն

Տավարաբուծությունը թիրախային տարածաշրջանում վարվում է հետխորհրդային ավանդական տեխնոլոգիաներով և արոտամսուրային պահվածքով, հիմնականում փոքր գյուղացիական տնտեսությունների մակարդակով: Բուծվող խոշոր եղջերավոր կենդանիների գերակշիռ մասը տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարված, կաթնամսային ուղղության կովկասյան գորշ ցեղն է (ավելի քան 90%): Կան նաև հոլշտեյն, շվից, սիմենթալ և սևաբղետ ցեղի կենդանիներ և դրանց խառնուրդներ: Չնայած առատ կերի առկայությանը՝ կենդանիների կաթնատվությունն ունի միջին մակարդակ: Կովկասյան գորշ ցեղատեսակի կաթնատվությունը տեղի պայմաններում կազմում է ընդամենը 1200-1800 լիտր/տարի, որը միջին ցուցանիշ է: Կաթի հիմնական մասը հանձնվում է մթերող կազմակերպություններին:

Ոչխարաբուծությունը

Ոչխարաբուծությունը թիրախ տարածաշրջանի անասնաբուծության ավանդական ճյուղերից է, որտեղ կիրառվում է արոտամսուրային պահվածքը, երբեմն հեռագնա արոտավայրային տարբերակով: Վարվում է գերազանցապես փոքր գյուղացիական տնտեսությունների մակարդակով: Հիմնականում բուծվում են տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարված մի քանի էնդեմիկ ցեղատեսակներ՝ մազեխ, բոզախ, բալբաս, հայկական կիսակոպտաբուրդ և այլն: Այս տարի տարածաշրջան են բերվել նաև մի քանի տասնյակ ֆրանսական Բլանշ ցեղատեսակի ոչխարներ, որոնք մաստու ուղղության են: Ոչխարաբուծությունից ստացվող հիմնական արդյունքներն են՝ միսը, կաթը և բուրդը: Տարածաշրջանում մեծ պահանջարկ ունի հատկապես գառան միսը: Ստացվող բրդի հիմնական քանակ վերամշակվում է Ամասիայում՝ վերջին մի քանի տարվա ընթացքում բացված բրդի վերամշակման գործարանի կողմից: Բնակչության շրջանում բրդի պահանջարկը խիստ նվազել է, դրա արհեստական փոխարինիչների լայն տարածման պատճառով: Կաթը սպառվում է հիմնականում գյուղացիական տնտեսություններում կամ վաճառվում դրանից պատրաստված պանրի տեսքով:

Խոզաբուծությունը

Անասնաբուծության այս ուղղությունը թիրախ տարածաշրջանում ընդհանուր առմամբ շատ մեծ տարածվածություն չունի, բայց զգալի նշանակություն ունի Արփի համայնքում, որի Արդենիս բնակավայրում գործում է խոզաբուծական մասնագիտացված տնտեսություն: Բնակչությունը խոզերը հիմնականում պահում է տնամերձ օժանդակ տնտեսություններում շուրջտարյա մսուրային պահվածքով: Բուծվում են հիմնականում հայկական մսային, սպիտակ խոշոր, ուկրաինական, տափաստանային սպիտակ, հյուսիսկովկասյան ցեղատեսակների խոզեր և դրանց խառնուրդներ: Միսը հիմնականում սպառվում է մարզի քաղաքային բնակավայրերում և մայրաքաղաքի շուկաներում: Խոզաբուծության զարգացումը տարածաշրջանում պայմանավորված է նաև կաթի վերամշակման ծավալներով, որովհետև կաթի վերամշակման ընթացքում ստացվող շիճուկը լավագույն կերերից մեկն է խոզերի կերակրման և բարձր քաշաճ ստանալու համար:

Թռչնաբուծությունը

Թիրախ տարածաշրջանում թռչնաբուծությունը վարվում է առավելապես տնային տնտեսությունների մակարդակում, կան նաև շատ փոքր թռչնաբուծական տնտեսություններ, բայց դրանց քանակը չնչին է: Թռչուններն հիմնականում պահվում են կիսաազատ պահվածքով, տնամերձ օժանդակ տնտեսություններում: Տարածաշրջանում պահվող հիմնական թռչնատեսակը հավն է, բայց կան նաև որոշակի քանակությամբ սագեր, բադեր, հնդկահավեր, խայտահավեր և այլն: Հավերի ամենատարածված ցեղատեսակը երևանյանն է, բայց հանդիպում են նաև լոման, լեզհորն, բրամա և այլ ցեղատեսակներ, ինչպես նաև դրանց խառնուրդներ: Հավերի երևանյան մսաձվատու ցեղը, իր սև և կարմիր ներցեղային տիպերով, շատ լավ հարմարված է տարածաշրջանի բնակլիմայական պայմաններին և ապահովում է բավականին բարձր մթերատվություն: Արտադրված թռչնամիսը հիմնականում ունի ներտնտեսային սպառում, իսկ ձուն իրացվում է տեղի շուկաներում:

Մեղվաբուծությունը

Թիրախային տարածաշրջանում հիմնականում բուծվում է հայկական մեղվի դեղին տարատեսակը, որոնք պահվում են շրջանակավոր փեթակներում: Մեղվաբուծությունը վարվում է մեծամասամբ նստակյաց եղանակով, շատ քիչ մեղվաբույծներ են վարում շարժական մեղվաբուծություն, որն աշխատատար է, բայց տնտեսապես ավելի արդյունավետ: Թիրախային տարածաշրջանի համայնքներում բավականին ընդարձակ տարածքներ են զբաղեցնում բնական լանդշաֆտները՝ ալպիական մարգագետիններով և լեռնային տափաստաններով, սակայն առկա ռեսուրսները մեղվապահության առումով այդքան էլ լիարժեք չեն օգտագործվում: Տարածաշրջանն ունի գրեթե իդեալական պայմաններ մեղվաբուծության զարգացման համար՝ քիմիական աղտոտումներից ու թունաքիմիկատներից գրեթե զերծ և տեխնածին ֆիզիկական դաշտերով համեմատաբար թույլ աղտոտվածություն (էլեկտրամագնիսական ալիքներ, ինֆրա և ուլտրաձայներ և այլն) ունեցող տարածք, ծաղկային բույսերով հարուստ կենսաբազմազանություն, պահպանված բնական լանդշաֆտներ, մաքուր ջրեր և մեղվապահության հարուստ ավանդույթներ: Չնայած դրան՝ մեղվաբուծությունը տարածաշրջանում հատկապես վերջին տարիներին դարձել է ցածր եկամտաբեր ուղղություն, մի կողմից անբարենպաստ կլիմայական պայմանների և եղանակային ծայրահեղ դրսևորումների և մյուս կողմից, մեղվաընտանիքների ձմեռացման ընթացքում դիտարկվող անկումների բարձր մակարդակի պատճառով, ինչը շատ գործոնների ազդեցության հետևանք է, բայց դրանցից կարևորագույնը մեղուների հիվանդությունների վաղ կանխագելման և պահվածքի թերություններն են:

Աղյուսակ 11-ում ներկայացված են գյուղատնտեսական տարբեր կենդանիների գլխաքանակները և մեղվաընտանիքների քանակը Շիրակի մարզում ու թիրախ տարածաշրջանում՝ ըստ համայնքների և շարժընթացի տեմպերի, 2018-2020թթ.⁸:

⁸Ներկայացվող տվյալները ստացվել են ՀՀ Շիրակի մարզպետարանից:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը և մեղվաբնտանիքների քանակը ՀՀ Շիրակի մարզում և թիրախային տարածաշրջանում 2018-2020թթ.

Կենդանիներ	ՇԻՐԱԿԻ մարզ			ԱՄԱՍԻԱ համայնք			ԱՐՓԻ համայնք			ԱՇՈՑՔ համայնք			ՍԱՐԱՊԱՏ համայնք			ԸՆԴԱՄԵՆԸ թիրախային տարածաշրջանում		
	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020
Խոշոր եղջերավոր կենդանիներ	91091	86964	87095	6076	4881	5275	6520	6095	6423	12234	11040	11549	7585	7719	7965	32415	29735	31212
<i>որից՝ կովեր</i>	44326	40799	40986	2871	2356	2412	3512	2638	2689	5824	5325	5644	3643	3593	3739	15850	13912	14484
Մանր եղջերավոր կենդանիներ	71811	76366	61926	10932	7574	8559	5356	4469	4120	9407	8092	8113	8834	8391	8964	34529	28526	29756
<i>որից՝ մաքիներ</i>	46108	43011	43952	6768	5113	5689	3095	2679	2396	5947	5117	5169	4598	4238	4498	20408	17147	17752
Խոզեր	14670	20222	23676	279	646	656	1912	2023	1658	323	447	557	404	592	594	2918	3708	3465
<i>որից՝ մերուններ</i>	3338	4509	4262	88	198	203	496	534	429	129	206	249	167	219	224	880	1157	1105
Թռչուններ	270075	243818	230097	10180	9655	10377	3366	3455	3313	8003	7446	7890	7691	7717	7028	29240	28273	28608
<i>որից՝ ածան հավեր</i>	197444	203899	197565	8867	8615	8894	2745	2781	2593	5996	5267	5469	6128	6203	5699	23736	22866	22655
Մեղվաբնտանիքներ	18082	19697	18119	1101	1439	1106	460	539	452	527	574	591	878	789	870	2966	3341	3019


Ինչպես երևում է բերված տվյալներից, տարածաշրջանում կան խոշոր և մանր եղջերավոր կենդանիների զգալի անասնագլխաքանակներ, համապատասխանաբար՝ 31212գլ և 29756գլ: Ըստ 2020թ. տվյալների՝ թիրախային տարածաշրջանի համայնքներում պահվում է ողջ Շիրակի մարզի խոշոր եղջերավոր կենդանիների 35.8%-ը, այդ թվում՝ կովերի 35.3%-ը, մանր եղջերավոր կենդանիների՝ 48.1%-ը, այդ թվում՝ մաքիների 40.4%-ը, խոզերի 14.6%-ը, այդ թվում՝ մերունների 25.9%-ը, թռչունների՝ 12.4%-ը, այդ թվում՝ ածան հավերի 11.5%-ը և մեղվաընտանիքների 16.7%-ը:

Թիրախ տարածաշրջանում է գտնվում Շիրակի մարզի ամբողջ արոտավայրերի 42.5%-ը և արոտավայրեր տարվող ողջ անասնագլխաքանակի 40.9%-ը: Այսինքն, թիրախ տարածաշրջանի արոտավայրերից օգտվող առկա անասնագլխաքանակի մասնաբաժինը, քանակական տեսանկյունից, գրեթե համարժեք է ունեցած արոտային ռեսուրսների մասնաբաժնին:

Անասնագլխաքանակի փոփոխության դինամիկան ըստ տարիների դիտարկելիս՝ նկատում ենք, որ 2018-2020թթ. ընթացքում նկատվել է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի մի փոքր անկում, բայց այդ փոփոխությունն այդքան էլ մեծ չէ և մարզային մակարդակում կազմում է 4.4% և 13.8%, իսկ թիրախ տարածաշրջանում համապատասխանաբար՝ 3.7% և 13.8%(Աղյուսակ 11, սխեմա 6 և 7):

ՄԽԵՄԱ 6

Խոշոր եղջերավոր կենդանիների համեմատական քանակները թիրախային տարածաշրջանի համայնքներում 2018-2020թթ.




Թիրախ տարածաշրջանի համայնքներում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների անասնագլխաքանակները տարբեր կերպ են տեղաբաշխված:

Ըստ 2020թ. տվյալների՝ խոշոր եղջերավոր կենդանիների քանակով բոլորին գերազանցում է Աշոցք համայնքը, որտեղ գլխաքանակը կազմում է 11.549գլ (37.0%), իսկ Սարապատ, Արփի և Ամասիա համայնքներում, համապատասխանաբար՝ 7965գլ (25.5%), 6423գլ (20.6%) և 5275գլ (16.9%): Միայն Աշոցք համայնքում կա գրեթե այնքան խոշոր եղջերավոր կենդանի, որքան Արփի և Ամասիա համայնքներում միասին վերցված:

Մանր եղջերավոր կենդանիների անասնագլխաքանակը (2020թ.) տարածաշրջանի համայնքներում տեղաբաշխված է հետևյալ կերպ. Սարապատ համայնքում՝ 8964գլ (30.1%), Ամասիայում՝ 8559գլ (28.8%), Աշոցքում՝ 8113գլ (27.3%) և Արփիում՝ 4120գլ (13.8%): Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը Սարապատ, Աշոցք և Ամասիա համայնքներում գրեթե համանման են, իսկ Արփի համայնքն այս ցուցանիշով կրկնակի անգամ զիջում է մյուս երեք համայնքներին (Միևնա 7):

ՄԽԵՄԱ 7

Մանր եղջերավոր կենդանիների համեմատական քանակները թիրախային տարածաշրջանի համայնքներում, 2018-2020թթ.




2018-2020թթ. ժամանակահատվածում խոզերի գլխաքանակը Շիրակի մարզում աճել է 61.4%-ով, նույն ժամանակահատվածում թիրախ տարածաշրջանում խոզերի գլխաքանակն աճել է ընդամենը 18.7%-ով: Համայնքների մեծ մասում խոզերի գլխաքանակն աճել է, Ամասիա համայնքում՝ 135.1%-ով, Աշոցք համայնքում՝ 72.4%-ով, Սարապատ համայնքում՝ 47.0%-ով, իսկ Արփի համայնքում նվազել է 13.3%-ով (*Միտում 8*): Բայց նույնիսկ նվազելու պայմաններում Արփի համայնքն ունի խոզերի ամենամեծ գլխաքանակը թիրախ տարածաշրջանում:

Խոզերի գլխաքանակը (2020թ. տվյալներով) տարածաշրջանի համայնքներում տեղաբաշխված է հետևյալ կերպ. Աշոցք համայնքում՝ 557գլ(16.1%), Սարապատում՝ 594գլ (17.2%), Ամասիայում՝ 656գլ (18.9%) և Արփիում՝ 1658գլ (47.8%): Թիրախ տարածաշրջանի համայնքներում առկա խոզերի գլխաքանակի գրեթե կեսը պահվում են Արփի համայնքում (*Միտում 8*): Այս հանգամանքը ոչ թե պայմանավորված է նրանով, որ Արփի համայնքում բնակչությունը նախընտրում է շատ խոզեր պահել, այլ նրանով, որ Արփի համայնքի Արդենիս բնակավայրում է տեղակայված Ղարիբյան եղբայրների պատկանող խոզաբուծական ֆերման և դրա հարևանությամբ գործող Արդենիսի

պանրագործարանը: Այս կառույցների հակաբնապահպանական գործելակերպի մասին նախկինում եղել են շատ հրապարակումներ⁹:

ՄԽԵՄԱ 8

Խոզերի համեմատական գլխաքանակները թիրախային տարածաշրջանի համայնքներում, 2018-2020թթ.




Շիրակի մարզում 2018-2020թթ. ընթացքում ընտանի թռչունների քանակը պակասել է 14.8%-ով, իսկ նույն ժամանակահատվածում թիրախ տարածաշրջանում թռչունների քանակն էական փոփոխությունների չի ենթարկվել, պակասել է ընդամենը 2.2%-ով:

Ըստ 2020թ. տվյալների՝ թռչունների քանակը թիրախային տարածաշրջանի համայնքներում հետևյալն է. Ամասիա համայնք՝ 10377թև (36.3%), Աշոցք համայնք՝ 7890թև (27.6%), Սարապատ համայնք՝ 7028թև (24.5%) և Արփի համայնք՝ 3313թև (11.6%): Ամասիա համայնքն ընտանի թռչունների քանակով գերազանցում է տարածաշրջանի բոլոր համայնքներին և ունի ավելի շատ թռչուն, քան Սարապատ և Արփի համայնքները միասին վերցված: Արփի համայնքում ընտանի թռչունների քանակն ամենափոքրն է, այն մոտ երեք անգամ պակաս է, քան Ամասիա համայնքում, 2.4 անգամ պակաս, քան Աշոցք համայնքում և 2.1 անգամ պակաս, քան Սարապատ համայնքում (*Միտենա 9*):


⁹<https://armeniasputnik.am/armenia/20170922/8755565/armenia-xoazbucaran-arpi-lij.html>
<http://shirak.mtad.am/news/item/2018/08/23/arden/>

Թոշուների համեմատական քանակները թիրախային տարածաշրջանի համայնքներում, 2018-2020թթ.



2018-2020թթ. ժամանակահատվածում մեղվարնտանիքների քանակը Շիրակի մարզում էական փոփոխությունների չի ենթարկվել և աճել է ընդամենը 0.2%-ով, իսկ նույն ժամանակահատվածում թիրախ տարածաշրջանում մեղվարնտանիքների քանակն աճել է 1.8%-ով:

Մեղվարնտանիքների համեմատական քանակները թիրախային տարածաշրջանի համայնքներում, 2018-2020թթ.



Մեղվարնտանիքների ամբողջ քանակն ըստ 2020թ. տվյալների՝ թիրախ տարածաշրջանի համայնքներում տեղաբաշխված է հետևյալ կերպ. Արփի համայնքում՝ 452 հատ (15.0%), Աշոցքում՝ 591 հատ (19.6%), Սարապատում՝ 870 հատ (28.8%) և Ամասիայում՝ 1106 հատ (36.6%):

Թիրախ տարածաշրջանի համայնքներում ամենաշատ թվով մեղվարնտանիքները պահվում են Ամասիա համայնքում, որը գերազանցում է Արփի և Աշոցք համայնքներում առկա մեղվարնտանիքների քանակը միասին վերցված (Միւսեմա 10):

Ամփոփելով անասնաբուծության տվյալները՝ կարելի է նշել, որ գյուղատնտեսության այս ճյուղը թիրախ տարածաշրջանում բավականին զարգացած է, բայց համայնքներից յուրաքանչյուրն ունի անասնաբուծության զարգացման իր առանձնահատկություններն ու նախընտրելի ուղղությունները: Ամասիա համայնքում առավել զարգացած են ոչխարաբուծությունը, թռչնաբուծությունն ու մեղվաբուծությունը, Աշոցք համայնքում՝ տավարաբուծությունն ու ոչխարաբուծությունը, Արփի համայնքում՝ խոզաբուծությունն ու տավարաբուծությունը, իսկ Սարապատ համայնքը չունի անասնաբուծության ընդգծված առաջատար ճյուղ և այլն է ընկնում անասնաբուծության բոլոր ուղղությունների միջին և համեմատաբար հավասարաչափ զարգացման մակարդակով:

3.3 Բուսաբուծությունը

Բուսաբուծությունը թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսության համեմատաբար թույլ զարգացած ուղղություն է: Հատկապես թույլ են զարգացած

բանջարաբուծությունը, պտղաբուծությունն ու հատապտղագործությունը, որոնք բուսաբուծության ամենակամտաբեր ուղղություններն են:

Բուսաբուծության ոլորտում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, վարսակի, բազմամյա կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբուստանային այլ կուլտուրաների մշակությամբ:

Վերջին տասը տարիներին թիրախային տարածաշրջանի գյուղատնտեսական մշակաբույսերի կազմում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, մասնավորապես մուսք են գործել հնդկացորենը, բազմամյա աշորան, սագախոտը, ոլոռը, կարմիր ոսպը, սիսեռը և այլն, բայց դրանք դեռևս ունեն շատ չնչին ծավալներ և/կամ ցանվում են փորձարարական նպատակներով: Ցանքաշրջանառությունից գրեթե հանվել են տեխնիկական ու կերային մշակաբույսերից շաքարի ձակնդեղը, գետնախնձորը, կանեփը, հլածուկը, խիստ կրճատվել է կտավատի ցանքատարածությունները, որոնք իրենց տեղը զիջել են բազմամյա խոտերին, հացահատիկային մշակաբույսերին և կարտոֆիլին: Որոշ չափով ավելացել է կարտոֆիլի, հացազգի և հատիկալնդեղեն մշակաբույսերի մշակության ծավալները:

Բանջարեղենի աճեցմամբ, պտղաբուծությամբ և հատապտղաբուծությամբ տարածաշրջանում զբաղվում են շատ փոքր ծավալներով, հիմնականում տնամերձ հողերում և այլ փոքր հողակտորներում, այն էլ տարածաշրջանի հարավային ցածրադիր բնակավայրերում: Այս ուղղությամբ տարածաշրջանում զբաղվող խոշոր ֆերմերներ կամ մասնագիտացված տնտեսություններ չկան:

Թիրախային տարածաշրջանի համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգերի քայքայվածության կամ ընդհանրապես բացակայության պատճառով բուսաբուծության զգալի մասը վարվում է անջրդի, ինչը բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների դեպքում հողագործությունը դարձնում է խիստ ռիսկային: Այս պայմաններում հնարավոր չի լինում բուսաբուծությունից ստանալ կայուն եկամուտներ, ինչի պատճառով վարելահողերի զգալի մասը տարածաշրջանում նպատակային չեն օգտագործվում և աստիճանաբար վերածվել են բնական կերհանդակների, մասնավորապես խոտհարքների:

2020թ. տվյալներով ցանքատարածությունները Շիրակի մարզում զբաղեցրել են 48344.03հա տարածք, իսկ թիրախ տարածաշրջանի համայնքներում՝ 8539.28 հա, ինչը կազմում է ողջ մարզի ցանքատարածությունների 17.7%-ը:

Թիրախային տարածաշրջանում առկա վարելահողերը կազմում են 25547.73 հա, որից 2020թ.-ին ցանվել է 8539.28 հա, ինչը նշանակում է, որ տարածաշրջանում վարելահողերի նպատակային օգտագործման ցուցանիշը կազմում է ընդամենը 33.4%: Վարելահողերի նպատակային օգտագործման ամենաբարձր ցուցանիշը նկատվում է Ամասիա համայնքում՝ 56.0%, Արփիում կազմում է 37.5%, Աշոցքում՝ 21.1%, իսկ Սարապատում՝ 19.7% (*Աղյուսակ 12*): Այս իրավիճակը կարելի է համարել օրինաչափ, քանի որ, տարածաշրջանում առկա ջրովի վարելահողերի 97,5%-ը գտնվում է Ամասիա

համայնքում և միայն 2,5%-ը՝ Սարապատ համայնքում: Ըստ տրամադրված պաշտոնական տվյալների Աշոցք և Արփի համայնքներով ընդհանրապես չկան ոռոգելի վարելահողեր, ավելի ճիշտ չկա ոռոգման համակարգ:

Շիրակի մարզի ողջ ցանքատարածությունների 67.71%-ը զբաղեցնում են հացահատիկային և հատիկաընդեղենային, 21.96%-ը՝ կերային, 2.97%-ը՝ բանջարաբոստանային և 0.20%-ը տեխնիկական մշակաբույսերը: Կարտոֆիլի ցանքերը կազմում են 7.17%:

ԱՂՅՈՒՄԱԿ 12

ՀՀ Շիրակի մարզում և թիրախ տարածաշրջանի համայնքներում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ըստ դրանց խմբերի, 2020թ.

Մարզի կամ համայնքի անվանումը	Ընդամենը ցանքատարածություններ (հա, %)	Այդ թվում				
		Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր (հա, %)	Կերային մշակաբույսեր (հա, %)	Կարտոֆիլ (հա, %)	Բանջարաբոստանային մշակաբույսեր (հա, %)	Տեխնիկական մշակաբույսեր (հա, %)
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	48344.03	32732.10	10614.90	3465.03	1436.90	95.10
	100%	67.71%	21.96%	7.17%	2.97%	0.20%
ԱՄԱՍԻԱ	3609.50	1488.00	1892.00	96.00	111.50	22.00
	100%	41.22%	52.42%	2.66%	3.09%	0.61%
ԱՐՓԻ	2227.00	1018.00	1182.00	26.00	0.00	1.00
	100%	45.71%	53.08%	1.17%	0.00%	0.04%
ԱՇՈՑՔ	1664.13	1551.40	23.50	75.07	0.66	13.50
	100%	93.23%	1.41%	4.51%	0.04%	0.81%
ՍԱՐԱՊԱՏ	1038.65	927.05	39.16	70.03	1.16	1.25
	100%	89.26%	3.77%	6.74%	0.11%	0.12%
ԸՆԴԱՄԵՆԸ թիրախ տարածաշրջանում	8539.28	4984.45	3136.66	267.10	113.32	37.75
	100%	58.37%	36.73%	3.13%	1.33%	0.44%

Թիրախ տարածաշրջանում ցանքատարածությունների 58.37%-ը կազմում են հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերը, այդ թվում՝ հացահատիկային մշակաբույսերը (ցորեն, գարի, աշորա, վարսակ, եգիպտացորեն, հաճար և այլն) զբաղեցնում են ցանքերի 98.67%-ը, իսկ հատիկաընդեղենային մշակաբույսերը (ոլոռ, լոբի, սիսեռ, ոսպ և այլն)՝ ընդամենը 1.33%-ը:

Տարածաշրջանում հացահատիկային մշակաբույսերի 25.2%-ը ցանվել է որպես աշնանացան, որն ամբողջությամբ եղել է ցորեն: Մնացած բոլոր հացազգի և հատիկաընդեղենային մշակաբույսերը ցանվել են գարնանը: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններում ամենամեծ մասնաբաժինն ունի վարսակը՝ 47.7%, ցորենը, համապատասխանաբար՝ 26.9%, գարին՝ 20.8%, եգիպտացորենը՝ 3.6%, իսկ հաճարը՝ 0.7%:

Հատիկաընդեղենայինների ցանքատարածություններում գերակշռում է ոսպը՝ 52.5%, ոլորը՝ 32.4%, իսկ մյուս մշակաբույսերը բոլորը միասին կազմում են 15.1%:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածություններն ըստ համայնքների՝ տեղաբաշխված են հետևյալ կերպ. Ամասիա համայնքում՝ 1488 հա (29.9%), Արփիում՝ 1018հա (20.4%), Աշոցքում՝ 1551.4հա (31.1%) և Սարապատում՝ 927.05հա (18.6%):

Թիրախ տարածաշրջանում կերային մշակաբույսերը զբաղեցնում են ամբողջ ցանքատարածությունների 36.73%-ը, որտեղ գերակշռում են բազմամյա կերային խոտաբույսերը (կորնգան, առվույտ, տրիտիկալե և այլն), որոնք կազմում են կերային մշակաբույսերի ամբողջ ցանքերի 96.3%-ը, իսկ կերային արմատապալարապտուղները և սիլոսացվող բույսերը կազմում են ընդամենը 3.7%-ը:

Կարտոֆիլի ցանքերը կազմում են թիրախ տարածաշրջանի բոլոր ցանքատարածությունների 3.13%, որոնց զգալի մասը գտնվում է Ամասիա համայնքում՝ մոտ 36%-ը, Աշոցքում՝ 28.1%-ը, Սարապատում՝ 26.2%-ը, իսկ Արփիում՝ 9.7%-ը:

Տարածաշրջանում շատ քիչ են բանջարաբուստանային (1.33%) և տեխնիկական մշակաբույսերի (0.44%) ցանքատարածությունները: Բանջարաբուստանային մշակաբույսերից հիմնականում մշակվում է սխտոր, կաղամբ, վարունգ, գազար, բազուկ, ծաղկակաղամբ, սոխ, կանաչ լոբի և այլն: Տեխնիկական մշակաբույսերի ցանքերում գերակշռում է կտավատը, և կա որոշակի քանակությամբ շաքարի ճակնդեղ:

Տարածաշրջանում մշակվող բանջարաբուստանային մշակաբույսերի ամբողջ ցանքատարածությունների 98.4%-ը գտնվում է Ամասիա համայնքում, 1.02%-ը՝ Սարապատում, 0.58%-ը՝ Աշոցքում, իսկ Արփի համայնքում այս խմբի մշակաբույսերի ցանքատարածությունները բացակայում են:

Տարածաշրջանում մշակվող տեխնիկական մշակաբույսերի բոլոր ցանքատարածությունների 58.3%-ը գտնվում է Ամասիա համայնքում, 35.8%-ը՝ Աշոցքում, 3.3%-ը՝ Սարապատում, 2.6%-ը՝ Արփի համայնքում:

Սա բացատրվում է նրանով, որ եթե հատիկաընդեղենային մշակաբույսերը հնարավոր է մշակել անջրդի պայմաններում, ապա բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գերակշիռ մասը գրեթե հնարավոր չէ աճեցնել առանց ոռոգման:


Այժմ տեսնենք, թե թիրախային տարածաշրջանի համայնքներում, ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի խմբերի, ինչպես են տեղաբաշխվել ցանքատարածությունները 2020 թվականին: Ինչպես երևում է սխեմա 11-ում ստացված պատկերից, Ամասիա և Արփի համայնքներում կերային մշակաբույսերի զբաղեցրած տարածքները մի փոքր գերազանցում են հացահատիկային և հատիկաընդեղենային

մշակաբույսերի ցանքատարածությունները, իսկ Աշոցք և Սարապատ համայնքներում, ճիշտ հակառակ պատկերն է. ցանքատարածությունների գերակշիռ մասը զբաղեցված են հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերով, որոնք մի քանի տասնյակ անգամ գերազանցում են կերային մշակաբույսերի ցանքերը:

Սա մի կողմից բացատրվում է նրանով, որ Աշոցք և Սարապատ համայնքների հողերի գերակշիռ մասը ոռոգելի չեն և հացազգի մշակաբույսերի ցանքերը մշակվում են հիմնականում անջրդի պայմաններում, մյուս կողմից անասնակերերով ապահովվածության տարբեր մակարդակներով և հնարավորություններով, ինչպես նաև սահմանամերձ, ավելի ճիշտ, միջսահմանային հողերի կառավարման առանձնահատկություններով:

ՄԽԵՄՍ 11

Թիրախ տարածաշրջանում մշակվող հիմնական մշակաբույսերի խմբերի ցանքային տարածությունների համեմատական մասնաբաժիններն ըստ համայնքների, 2020թ.



Բուսաբուծության ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը մշակաբույսերի բերքատվության մակարդակն է, որն ինչպես մարզի տարածքում, այնպես էլ այս տարածաշրջանի տարբեր հատվածներում խիստ տարբեր է, չնայած հաշվարկները սովորաբար կատարվում են մարզի միջին ցուցանիշներով:

ՀՀ Շիրակի մարզում 2020թ. հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի միջին բերքատվությունը 1 հա-ից կազմել է 19.67 ցենտներ, կերային մշակաբույսերինը՝ 22.1 ցենտներ¹⁰, իսկ կարտոֆիլինը՝ 216.5 ցենտներ:

¹⁰ Հաշվարկների համար վերցվել է բազմամյա կերային մշակաբույսերի բերքատվության ցուցանիշը, քանի որ դրանք կազմում են թիրախ տարածաշրջանի կերային մշակաբույսերի գերակշիռ մասը, ավելի քան 90%-ը:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ 2020թ. հացազգի և հատիկաընդդեմային մշակաբույսերից Շիրակի մարզում ստացված համախառն բերքը կազմել է 63206.80 տոննա, իսկ կերային մշակաբույսերից՝ 23458.93 տոննա: Նույն մշակաբույսերի համախառն բերքը թիրախային տարածաշրջանում կազմել է համապատասխանաբար՝ 9804.41 և 6932.02 տոննա: Կարտոֆիլի համախառն բերքը Շիրակի մարզում 2020թ. կազմել է 75017.9 տոննա, իսկ թիրախային տարածաշրջանում՝ 5782.72 տոննա:

ԱՂՅՈՒՄԱԿ 13

Շիրակի մարզում և թիրախ տարածաշրջանի համայնքներում հիմնական մշակաբույսերից ստացված բերքն ըստ տվյալ տարվա մարզային միջին բերքատվության, 2020թ.

Մարզի կամ համայնքի անվանումը	Հացազգի և հատիկա-ընդդեմային մշակաբույսեր		Կերային մշակաբույսեր		Կարտոֆիլ	
	Բերքահավաքի տարածքը (Հա)	Հավաքված բերքը, (Ցենտներ)	Բերքահավաքի տարածքը (Հա)	Հավաքված բերքը, (Ցենտներ)	Բերքահավաքի տարածքը (Հա)	Հավաքված բերքը, (Ցենտներ)
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	32136.00	632068.0	10614.90	234589.29	3465.03	750179.00
ԱՍՄԱՄԻԱ	1488.00	29269.0	1892.00	41813.20	96.00	20784.00
ԱՐՓԻ	1018.00	20024.1	1182.00	26122.20	26.00	5629.00
ԱՇՈՑՔ	1551.40	30516.0	23.50	519.35	75.07	16252.66
ՍԱՐԱՊԱՏ	927.05	18235.1	39.16	865.44	70.03	15161.50
ԸՆԴԱՄԵՆԸ թիրախ տարածաշրջանում	4984.45	98044.1	3136.66	69320.19	267.10	57827.15

Հաշվի առնելով այս տարածաշրջանում անջրդի պայմաններում բուսաբուծության վարման բարձր ռիսկայնությունը, գյուղատնտեսական տեխնիկայի սակավությունն ու խիստ մաշվածությունը, ոռոգման հնարավորությունների ստեղծման հետ կապված համայնքային ռեսուրսների անբավարարությունը, խորհրդային տարիներից մնացած գյուղատնտեսության վարման սովորության զործելակերպերը և կադապարային մտածելակերպը, Շիրակի մարզի ագրոկլիմայական ռեսուրսների ընձեռած հնարավորությունների թերագնահատման մթնոլորտը, ոլորտը չգարգանալու մեղքը կլիմայական պայմանների վրա զցելու բարդույթը, գյուղատնտեսական մթերքների արտադրության նկատմամբ բնակչության գրեթե չփոփոխվող պահանջարկն ու այսօր Հայաստանում առկա գյուղատնտեսական մթերքի շուկայի զարգացման միտումները՝ բուսաբուծությունը Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի տարածաշրջաններում շարունակում է մնալ սահմանափակ ծավալների, ցածր եկամտաբերության, քիչ թվով մշակաբույսերի և փոքր գյուղացիական տնտեսությունների սահմաններում:

3.4 Գյուղատնտեսական տեխնիկական և ենթակառուցվածները

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը կախված է ոչ միայն բուն գյուղատնտեսությունից, այլև այն սպասարկող հարակից ճյուղերի զարգացման մակարդակից և ենթակառուցվածքների վիճակից: Գյուղատնտեսության արտադրության համար մեծ դերակատարություն ունեն.

- համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը, վիճակը, տեխնիկական սպասարկման մակարդակը և մատուցվող ծառայությունների որակը,
- ոռոգման համակարգերի առկայությունը, վիճակը և ջրի պահեստավորման կարողությունները,
- նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածությունը,
- ճանապարհային ցանցի վիճակը,
- հակակարկտային պաշտպանության կայանների առկայությունը և սպասարկման որակը,
- շուկայի հեռավորությունն ու հասանելիությունը,
- պահեստավորման տարածքների առկայությունը,
- անասնաբուժական, ագրոքիմիական և այլ ծառայությունների զարգացածության մակարդակն ու հասանելիությունը:

Գյուղատնտեսական տեխնիկան

Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը ագրարային ոլորտի զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է, որը նպաստում է ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական արտադրության ծավալների աճին և առկա ագրոռեսուրսների լիարժեք օգտագործմանը:

Անկախացումից և գյուղ.ոլորտի արտադրական միջոցների սեփականաշնորհումից հետո, թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսական տեխնիկայի նորացման տեմպերը խիստ ցածր են եղել, ինչը հանգեցրել է մեխանիզացիայի օգտագործման արտադրողականության նվազման և ծախսատարության ավելացման:

Թիրախ տարածաշրջանի համայնքներում ներկայումս առկա գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների զգալի մասը բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի և տեխնիկական բարձրորակ սպասարկման մեծ պահանջարկ: Տարածաշրջանի համայնքներում ժամանակակից և բարձր արդյունավետություն ունեցող գյուղատնտեսական տեխնիկայի պակասը խոչընդոտում է վարելահողերի լիարժեք օգտագործմանը և բուսաբուծության ոլորտի զարգացմանը:


Այնուամենայնիվ, թիրախ տարածաշրջանում կա անհատ տնտեսավարողներին և համայնքներին պատկանող զգալի քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ: Աղյուսակ 14-ում ներկայացված են Շիրակի մարզում և թիրախ

տարածաշրջանի համայնքներում առկա, գյուղատնտեսական տեխնիկայի քանակի
նվիճակի վերաբերյալ տեղեկատվություն, 2020թ. դրությամբ:

ՀՀ Շիրակի մարզում և թիրախ տարածաշրջանի համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի տարբեր տեսակների առկայության և վիճակի վերաբերյալ քանակական տվյալներ, 2020թ.

Գյուղատնտեսական տեխնիկա	ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ		ԱՄԱՍԻԱ համայնք		ԱՐՓԻ համայնք		ԱՇՈՅՔ համայնք		ՍԱՐԱՊԱՏ համայնք		Ընդամենը թիրախ տարածաշրջանում	
	Առկա քանակը	Որից սարքին վիճակում	Առկա քանակը	Որից սարքին վիճակում	Առկա քանակը	Որից սարքին վիճակում	Առկա քանակը	Որից սարքին վիճակում	Առկա քանակը	Որից սարքին վիճակում	Առկա քանակը	Որից սարքին վիճակում
Տրակտորներ	1742	1495	90	68	115	101	289	265	202	173	696	607
Հացահատիկահավաք կոմբայններ	278	236	8	5	0	0	16	13	11	9	35	27
Կերահավաք կոմբայններ	108	96	4	2	14	14	40	35	13	11	71	62
Կարտոֆիլահավաք կոմբայններ	63	57	2	2	2	2	6	4	0	0	10	8
Տրակտորային խոտհնձիչներ	385	348	23	17	95	92	83	66	66	63	267	238
Տրակտորային շարքացաններ	412	366	25	15	9	9	32	30	24	24	90	78
Տրակտորային գութաններ	692	647	51	45	21	21	67	61	63	59	202	186
Կուլտիվատորներ	598	554	36	35	13	12	41	39	37	36	127	122
Հատիկագտիչ մեքենաներ	67	60	6	6	0	0	1	1	2	2	9	9
Հավաքիչ-մամլիչներ	455	419	23	17	32	30	79	68	53	53	187	168
Այլ	255	225	0	0	0	0	66	61	39	39	105	100
ԸՆԴԱՄԵՆԸ	5055	4503	268	212	301	281	720	643	510	469	1799	1605

Գյուղատնտեսական տեխնիկայի համեմատական քանակները թիրախային տարածաշրջանի համայնքներում, 2020թ.



Ինչպես տեսնում ենք բերված տվյալներից, Շիրակի մարզում առկա է 5055 հատ գյուղատնտեսական տեխնիկա, որից սարքին վիճակում է 4503-ը, իսկ թիրախ տարածաշրջանում՝ 1799 հատ, որից սարքին վիճակում է 1605-ը:

Թիրախ տարածաշրջանի համայնքներից ամենաշատ թվով գյուղատնտեսական տեխնիկա է առկա Աշոցք համայնքում՝ 643 հատ, որը կազմում է տարածաշրջանում սարքին վիճակում գտնվող ողջ գյուղ. տեխնիկայի 40.1%-ը: Սարապատ համայնքում առկա է 469 հատ սարքին վիճակում գտնվող գյուղատնտեսական տեխնիկա, Արփիում՝ 281 հատ, իսկ Ամասիայում՝ 212 հատ, դրանք համապատասխանաբար կազմում են տարածաշրջանում սարքին վիճակում գտնվող ողջ գյուղ. տեխնիկայի՝ 29.2%-ը, 17.5%-ը և 13.5%-ը: Աշոցք համայնքում 1.3 անգամ ավել շատ սարքին վիճակում գտնվող գյուղ տեխնիկա կա, քան Ամասիա և Արփի համայնքներում միասին վերցված: Չնայած դրան, Ամասիա համայնքում 2.17 անգամ ավելի շատ ցանքատարածություններ են մշակվում, քան Աշոցք համայնքում:

Գյուղատնտեսական խոշոր տեխնիկան և սարքավորումները բավականին արդյունավետ են արդյունաբերական գյուղատնտեսության սկզբունքների կիրառության և համեմատաբար մեծ հողատարածքների մշակության պայմաններում: Փոքր հողակտորների մշակության և համեմատաբար կայուն գյուղատնտեսության վարման պայմաններում, ինչպիսին է այսօր թիրախ տարածաշրջանում առկա

հողային ռեսուրսների սեփականության և կառավարման վիճակը, անհրաժեշտ է մտածել փոքր, բայց արդյունավետ գյուղատնտեսական տեխնիկայի կիրառության մշակույթի ներդրման ուղղությամբ: Սա մի կողմից կփոքրացնի կախումը տեխնիկասարքավորումների սեփականատերերից, հնարավորություն կտա ագրոտեխնիկական միջոցառումները իրականացնել ճիշտ ժամանակին և մյուս կողմից կպակասեցնի հողային ռեսուրսների վրա մարդածին ճնշումը:

Ոռոգման համակարգեր

Թիրախային տարածաշրջանի գրեթե բոլոր բնակավայրերում առկա են բազմաթիվ ջրաղբյուրներ և ոռոգման նպատակով ջրապահովվածությունը տարածաշրջանում շատ բարձր է: Սակայն ցանցը, որը կառուցված է եղել դեռևս խորհրդային ժամանակաշրջանում, մասնակի կամ ամբողջությամբ քայքայված է: Բնակավայրերի գերակշիռ մասը զուրկ է միջհամայնքային ջրանցքներից, ինչպես նաև ներհամայնքային ջրատարներից ու ոռոգման ցանցերից:

Ոռոգելի վարելահողերը թիրախ տարածաշրջանում կազմում են մոտ 1550 հա, բայց փաստացի ոռոգվում է դրանցից 1266.1 հա-ն, որից Ամասիա համայնքում 1234.5 հա և Սարապատ համայնքում՝ 31.6 հա: Աշոցք և Արփի համայնքներում ոռոգելի վարելահողեր գրեթե չկան:

Ամասիա համայնքի տարածքում ոռոգելի հողերի գերակշիռ մասը (98.4%) տեղակայված է հիմնականում Մեղրաշատ, Ողջի, Բյուրակն, Գտաշեն, Արեգնադեմ և Բանդիվան բնակավայրերում:

Սարապատ համայնքում ոռոգելի վարելահողերը տեղակայված են միայն Հոդմիկ և Գոգհովիտ բնակավայրերում:

Տարածաշրջանի մյուս բոլոր բնակավայրերում ոռոգման ենթակառուցվածքները բացակայում են, իսկ հողերից ոռոգվում են միայն նրանք, որոնք գտնվում են գետերի ու աղբյուրների հարակից տարածքներում կամ ցածրադիր գետահովիտներում և հնարավոր է սեփական ուժերով բացված ակոսների միջոցով ինքնահոս եղանակով իրականացնել ոռոգում: Տնամերձ հողամասերում ոռոգումն իրականացվում է հիմնականում խմելու ջրով:

Թիրախ տարածաշրջանում ջրակուտակման և ոռոգման նպատակով ջրօգտագործման ներկա ծավալները շատ փոքր են և առկա ջրերի զգալի մասը չեն կուտակվում և գրեթե չեն օգտագործվում տեղի ցանքատարածությունների ոռոգման նպատակով: Տարածաշրջանում են գտնվում Արփի լճի և Թավշուտի ջրամբարները, համապատասխանաբար 105.0 և 6.0 մլն խոր. մետր ջրակուտակման ծավալներով: Թավշուտի ջրամբարի կառուցումը նպատակ է հետապնդել ինքնահոս եղանակով ոռոգել Աշոցքի տարածաշրջանի ավելի քան 1500 հա հողատարածություն, բայց ներկայումս այն հիմնականում վերածվել է Ախուրյան գետի ջրերի համալրման

պահեստային ջրամբարի: Փոքր քանակներով ոռոգվում են Թավշուտ բնակավայրի ցածրադիր հողերը:

Տարածաշրջանում կան նաև փոքր լճակներ (Արդենիսի լիճը, Ձորաշենի լճակը և այլն), որոնցից արտահոսող ջրերը նույնպես կարելի է ուղղորդել ոռոգման նպատակների համար, բայց դրա համար կա լրացուցիչ ուսումնասիրությունների և ներդրումների անհրաժեշտություն:

Ամասիա համայնքի տարածքում առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում է կառուցել Կապսի ջրամբարը, որի հողաշինական աշխատանքներն իրականացվել են դեռևս խորհրդային տարիներին: Ըստ նախագծային փաստաթղթերի այն կունենա 25-60 մլն. Խոր. մետր ջրատարողություն և թույլ կտա ոռոգել ավելի քան 5 հազար հա նոր տարածքներ, ինչպես նաև բարելավել ներկայումս ոռոգվող տարածքների ջրապահովվածությունը:

Ճանապարհային ցանցը

Տարածաշրջանի միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների քիչ մասն է ասֆալտապատ, հիմնական մասը հողային են, որոշ մասերում խճապատ և մեծամասամբ գտնվում են անբարեկարգ վիճակում: Դրանց առանձին հատվածներ դժվարանցանելի են, իսկ ձմռան ժամանակահատվածում՝ երբեմն նաև անանցանելի: Ճանապարհների վիճակը լուրջ դժվարություններ է առաջացնում գյուղատնտեսական մթերքները հասարակական տրանսպորտով սպառման շուկաներ հասցնելու համար և սահմանափակում տարածաշրջանում գյուղատնտեսական մթերքների լիարժեք իրացման գործընթացը:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են նաև դաշտամիջյան ճանապարհները: Տեղումների ժամանակ առանձին տեղամասեր անանցանելի են դառնում տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի համար, որը լուրջ դժվարություններ է ստեղծում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և ստացված բերքի տեղափոխման ընթացքում:

Հակակարկտային պաշտպանությունը

2020թ. դրությամբ մարզում ընդհանուր առմամբ տեղադրված է 172 հատ «Զենիթ» ապրանքանիշի գազագեներատորային հակակարկտային կայան, որի աշխատանքի հիմքում ընկած է ձայնային թնդանոթում ացետիլեն գազի պայթյունից առաջացած ձայնային ալիքների ազդեցությունը կարկտի առաջացման օջախների վրա: Հակակարկտային պաշտպանության այս եղանակի արդյունավետությունը կազմում է միջինը 50%՝ կախված կարկտային պրոցեսի ուժգնությունից, ամենաբարձր արդյունավետությունը ցուցաբերում է 500 մետր շառավղով, 100-105 հա տարածքի վրա: Հակակարկտային կայաններն ավտոմատացված են, ունեն ինքնավար էլեկտրասնուցման, գազամատակարարման, հեռակառավարման համակարգեր:

Թիրախ տարածաշրջանի համայնքներում ընդհանուր առմամբ տեղադրված է 28 հակակարկտային կայան, այդ թվում. 10-ը՝ Ամասիա համայնքի, 10-ը՝ Աշոցք համայնքի և 8-ը՝ Սարապատ համայնքի վարչական տարածքներում:

Ամասիա համայնքում դրանք տեղակայված են Ողջի, Մեղրաշատ և Գտաշեն բնակավայրերում՝ երկուական, իսկ Բյուրակնում, Արեգնադեմում, Ամասիայում և Բանդիվանում՝ մեկական:

Աշոցք համայնքում դրանք տեղակայված են Կրասարում և Փոքր Մեպասարում՝ երեքական, իսկ Աշոցքում և Մեծ Մեպասարում՝ երկուական:

Սարապատ համայնքում դրանք տեղակայված են մեկական՝ Հողմիկ, Գոգհովիտ, Թորոսգյուղ, Արփենի, Սարապատ, Սալուտ, Մուսայելյան և Վարդաղբյուր բնակավայրերում: 2021թ. Սարապատ համայնքում նախատեսվում է տեղադրել ևս 8 հակակարկտային կայան: Չնայած տեղադրված հակակարկտային կայանների քանակին և տարեցտարի ավելանալու շարժընթացին, այս տիպի հակակարկտային պաշտպանության արդյունավետությունը խիստ կասկածելի է, ըստ տեխնիկական նկարագրերի՝ 50%: Այս նպատակին ուղղվող միջոցները և պաշտպանության արդյունավետության մակարդակը բարձրացնելու ձգտումը, ավելի շատ, պետք է ուղղորդել հրետանային տիպի հակակարկտային պաշտպանության համակարգ կամ պոլիէթիլենային ցանցերով անհատական պաշտպանության համակարգեր ստեղծելու ուղղություններով, քանի որ դրանցով պաշտպանվելու արդյունավետությունը կազմում է 95-100%:

3.5 Գյուղատնտեսության ոլորտի զարգացման մարդկային ներուժը

Թիրախ տարածաշրջանի համայնքներում բնակվող չափահաս բնակչության ավելի քան 70%-ի հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսական արտադրությունն է, իսկ մյուս մասը, ովքեր ունեն այլ զբաղվածություն, բացի իրենց այլ հիմնական զբաղվածությունից, մեծամասամբ զբաղվում են նաև գյուղատնտեսությամբ:

Տարածաշրջանն ունի գյուղատնտեսության ոլորտում աշխատելու փորձառություն և հանապատասխան կարողություններ ունեցող մարդկային ներուժ, բայց անհրաժեշտ է լրջագույն աշխատանք տանել նրանց՝ գյուղատնտեսության ոլորտի կառավարման, ագրոտեխնոլոգիաների կիրառության, բերքահավաքի, պահպանության և վերամշակման, ինչպես նաև շուկայավարության ու բնական ռեսուրսների խնայողական օգտագործման վերաբերյալ գիտելիքների թարմացման և համալրման ուղղությամբ:

Տարածաշրջանում որոշակի խնդիր կա գյուղատնտեսության ոլորտի բարձր որակավորման մասնագետների քանակի հետ կապված: Արդեն սկսել են չբավարարել ագրոնոմները, անասնաբույժներն ու անասնաբույծները, կաթի վերամշակման մասնագետները, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման և վերանորոգման մասնագետները, նույնիսկ հովիվներն ու կթվորները:

Տարածաշրջանում բնակվող շատ մասնագետներ ցանկություն չունեն աշխատելու իրենց մասնագիտության ուղղությամբ, քանի որ գյուղատնտեսության ոլորտում բավականին ցածր են առաջարկվող աշխատավարձերը:

Ներկայումս, հանրապետության գյուղատնտեսության ոլորտում նկատվում են ինտենսիվացման և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման միտումներ, ինչը, իր հերթին, բերում է գյուղատնտեսությամբ զբաղվողների տեղեկացվածության և կրթության մակարդակի շարունակական բարձրացման անհրաժեշտություն:

3.6 Թիրախային տարածաշրջանի ագրոկլիմայական պայմանները

Որպես ֆիզիկաաշխարհագրական հիմնական բնութագիր՝ թիրախ տարածաշրջանին բնորոշ են բարձրադիր մակերևույթը, կլիմայական խիստ պայմանները, չափավոր խոնավությունը, լեռնատափաստանային և լեռնամարգագետնային հողերն ու հարուստ բուսականությունը:

Տարածաշրջանի հիմնական մասում կլիման բարեխառն ցամաքային է, ավելի բարձրադիր վայրերում՝ ցուրտ լեռնային: Բնորոշ են կարճատև տաք ամառներն ու երկարատև ու ցուրտ ձմեռները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 2-ից 4,1°C է, հունվարի միջին ջերմաստիճանը $-10/-14^{\circ}\text{C}$ է, հուլիսինը՝ $10-16^{\circ}\text{C}$:

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 550-800 մմ-ի սահմաններում: Տեղումների առավելագույն քանակը դիտվում է մայիս ամսին՝ 80 մմ, իսկ նվազագույնը սեպտեմբերին՝ 36 մմ: Ձնածածկույթի միջին հաստությունը հասնում է մինչև 120 սմ, իսկ ձյան տեսքով տեղումների գումարային քանակը կարող է հասնել մինչև 310 սմ: Նոյեմբերի երկրորդ կեսից դիտվում է կայուն ձնածածկույթ, որը վերանում է մարտի սկզբին: Ձնածածկույթի շերտի միջին բարձրությունը 15 սմ է:

Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9°C է: հունվարին՝ -5°C , իսկ հուլիսին՝ 23°C : Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70-80 սմ:

Մթնոլորտային ճնշման տարեկան միջին ցուցանիշը 861.0 միլլիբար է, իսկ հարաբերական խոնավությունը՝ 79%: Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից մայիսից մինչև հոկտեմբեր ամիսները դիտարկվում են որպես հարմարավետ, 70%-ից բարձր խոնավություն նկատվում է մայիս, հունիս, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին, իսկ 80%-ից բարձր խոնավություն արձանագրվում է նոյեմբեր - մարտ ժամանակահատվածում:

Լինում են ուժեղ քամիներ, բայց գերակայում են 3,5-6,0 մ/վրկ արագությամբ փյուսիսային, արևելյան և արևմտյան ուղղությամբ փչող քամիները: 3.0 մ/վրկ-ից մեծ քամու արագություն ավելի հաճախ դիտարկվում է ապրիլ և հուլիս ամիսներին:

Տարածաշրջանում գերակշռում են լեռնատափաստանային, լեռնային մարգագետնատափաստանային և լեռնամարգագետնային հողերը: *Լեռնատափաստանային սևահողերը* գերազանցապես տարածված են 1500-2200մ բարձրությունների վրա, հումուսի պարունակությունը 4-11%, սևահողերի միջին

հզորությունը՝ 50-65սմ: *Լեռնային մարգագետնատափաստանային հողերը* տարածված են 2200-2700մ բարձրություններում, հումուսի պարունակությունը՝ 8-12%, հողաշերտի հզորությունը՝ 30-45 սմ: Լեռնամարգագետնային հողերը տարածված են 2700 մետրից մեծ բարձրություններում, հողաշերտի հզորությունը՝ 15-20սմ:

Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից կախված՝ բուսաճական շրջանի տևողությունը թիրախ տարածաշրջանի տարբեր տեղամասերում կարող է կազմել 60-ից մինչև 145 օր: Բուսաճական կամ վեգետացիոն շրջանն այն ժամանակահատվածն է, երբ, ըստ օդերևութաբանական պայմանների, հնարավոր է բույսերի աճն ու զարգացումը: Տևողությունը որոշվում է օդի 5°C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թվով, և սկսվում է գարնանն օդի ջերմաստիճանը 5°C-ից բարձրանալիս, ավարտվում աշնանը՝ 5°C-ից իջնելիս: Թիրախային տարածաշրջանում բուսաճական շրջանը սկսվում է ապրիլի վերջին, մայիսի սկզբին և ավարտվում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Բուսաճական շրջանի տևողությամբ են պայմանավորված մշակաբույսերի տեսակի և սորտի ընտրությունը, տեղաբաշխումն ու շրջանացումը, ագրոտեխնիկական միջոցառումների ժամկետները, արոտային ժամանակաշրջանի տևողությունը և այլն:

Թիրախ տարածաշրջանի տարբեր հատվածները և նույնիսկ տարբեր բնակավայրերը առանձնանում են ագրոկլիմայական պայմանների և գյուղատնտեսական ներուժի խիստ բազմազանությամբ և յուրօրինակությամբ, ինչը հնարավորություն է տալիս, ցանկության դեպքում, տարածաշրջանում ունենալ բուսաբուծության ոլորտի շատ մեծ ագրոկենսաբազմազանություն:

Տարածաշրջանում առկա հողատիպերի, լանդշաֆտային և կլիմայական պայմանների և բուսաճական շրջանի առանձնահատկությունների ամբողջությունը թույլ է տալիս եզրակացնել, որ թիրախ տարածաշրջանի համայնքներն ունեն մի շարք հացահատիկային, հատիկաբնդեղենային, կերային, տեխնիկական, պտղային և հատապտղային մշակաբույսերի աճեցման և զարգացման համար բավարար ագրոկլիմայական պայմաններ: Առկա ագրոկլիմայական պայմանների ճիշտ օգտագործումը հնարավորություն կտա բազմազանեցնել տարածաշրջանի համայնքների և նույնիսկ առանձին բնակավայրերի բուսաբուծության ճյուղային կառուցվածքը և, ելնելով շուկայի պահանջներից, դրանք դարձնել տվյալ համայնքի կամ բնակավայրի բուսաբուծության մասնագիտացման ուղղություններից մեկը:

Ելնելով թիրախային տարածաշրջանում առկա գյուղատնտեսական ռեսուրսներից ու ագրոկլիմայական պայմաններից՝ բնական էկոհամակարգերի պահպանության և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման առաջնահերթություններից, անհրաժեշտ է՝ արմատապես վերանայել և բարեփոխել գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների շրջանում առկա ագրոմշակույթը, համալրել ագրոբիզնեսի ոլորտի փորձն ու գիտելիքները, բարձրացնել ոլորտի տնտեսական արդյունավետությունը, զարգացնել նոր, համեմատաբար քիչ ֆինանսական ներդրումներ պահանջող և բարձր եկամուտներ ապահովող գյուղատնտեսական ուղղություններ, որոնք կապահովեն բարձր եկամտաբերություն, ագրոտեխնոլոգիական ժամանակակից տարբեր

բաղադրիչների ներդրում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցում, ինչպես նաև, նախադրյալներ կստեղծեն ձեռնարկատիրական գործունեության զարգացումը խթանելու և բնակիչների եկամուտների զգալի աճ ապահովելու համար:

**4. ԹԻՐԱԽԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴՐԱՆ ՆՊԱՍՏՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ**

4.1 Թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսական ոլորտի սոցիալ-տնտեսական ու բնապահպանական հիմնախնդիրները

Բնատնտեսական համեմատաբար նպաստավոր ու բավարար պայմանները, պատմական զարգացման ընթացքը և տնտեսաաշխարհագրական նպաստավոր դիրքը պայմանավորել են Շիրակի մարզի հյուսիսում գյուղական բնակավայրերի ձևավորմանն ու զարգացմանը: Սպիտակի երկրաշարժը և հետխորհրդային տնտեսական ճգնաժամը խստորեն նվազեցրել են մարզի տնտեսական ներուժը և էական բացասական ազդեցություն ունեցել գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա: Վերջին երեք տասնամյակի ընթացքում Շիրակի մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական գրեթե ճգնաժամային իրավիճակն առավել սուր դրսևորում ունի Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների, ինչպես նաև մարզի մյուս լեռնային ու բարձրլեռնային, գյուղական բնակավայրերի վրա: Դրանք առանձնանում են փոքր բնակչությամբ, բարդ աշխարհագրական դիրքով, անկայուն կլիմայական պայմաններով, ցածր արդյունավետությամբ վարվող գյուղատնտեսական արտադրությամբ, մարզկենտրոնի հետ կապող ճանապարհների վատ վիճակով և դրանից ունեցած համեմատաբար մեծ հեռավորությամբ: Նման իրավիճակը զգալիորեն խոչընդոտում է գյուղական բնակավայրերի զարգացմանն ու առաջընթացին և պահանջում է տարածաշրջանային զարգացման նոր սկզբունքների և տնտեսական խթանման նոր գործուն մեխանիզմների ներդրում:

Գյուղատնտեսական արտադրանքի անընդհատ աճող պահանջարկը, ռեսուրսների ոչ ճիշտ կառավարման պայմաններում, հանգեցնում է բնական ռեսուրսների հյուծման և գյուղատնտեսության արտադրության տնտեսական արդյունավետության անկման, ինչն էլ ավելի է խորանում կլիմայական փոփոխության բացասական ազդեցության պայմաններում: Ներկայումս թիրախ տարածաշրջանում առաջացել է գյուղատնտեսության վարման սկզբունքների վերանայման, կայուն գործելակերպերի ու նոր, կանաչ տեխնոլոգիաների ներդրման կենսական անհրաժեշտություն:

Գյուղատնտեսությունն այն ոլորտներից է, որը, մի կողմից, ուղղակիորեն կախված է բնական պայմանների և կլիմայական գործոնների ազդեցությունից, բայց մյուս կողմից ուժեղ բացասական ազդեցություն է գործում բնական էկոհամակարգերի վրա: Այսօր աշխարհում վարվող գյուղատնտեսության հիմնական համակարգերը պատճառ

են դարձել էական բնապահպանական հիմնախնդիրների ի հայտ գալուն, որոնցից են՝ հողերի դեգրադացիան, մակերևութային և ստորերկրյա ջրերի, օդի և բնական միջավայրի աղտոտումը թունանյութերով ու թափոններով, կենսաբազմազանության խախտումները, ջերմոցային գազերի արտանետումների ավելացումը և այլն:

Ներկայումս գյուղատնտեսական արտադրության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը կայուն կամ կանաչ գյուղատնտեսության հայեցակարգն է, համաձայն որի գյուղատնտեսությունը պետք է բավարարի սննդամթերքի հետ կապված հասարակության կարիքները, ապահովի գյուղական բնակչության բարձր կենսամակարդակը և միաժամանակ նվազեցնի մարդածին ճնշումը բնական էկոհամակարգերի վրա: Այս մոտեցումը յուրահատուկ է նրանով, որ հաշվի է առնում յուրաքանչյուր առանձին վերցված տարածքի ագրոմշակույթը, բնապահպանական, կլիմայական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները:

Կայուն գյուղատնտեսությունը տնտեսության վարման բարելավված և անվտանգ մի այնպիսի համակարգ է, որի դեպքում առավելագույնս օգտագործվում է բնական ռեսուրսների ներուժը, բայց միաժամանակ ապահովվում է էկոլոգիական անվտանգությունն ու էկոհամակարգի բերրիության մշտական վերականգնումը: Այսինքն, կայուն գյուղատնտեսությունը գյուղատնտեսության վարման մի այնպիսի համակարգ է, որի պարագայում չի վնասվում շրջակա միջավայրը, հաշվի է առնվում սոցիալական ու տնտեսական կառուցվածքը, արտադրողներն ստանում են բավարար եկամուտներ և նպաստավոր պայմաններ են ստեղծվում գյուղական համայնքներում կյանքի որակի բարելավման և զարգացման համար: Կայուն գյուղատնտեսության ամենակատարելագործված և հավաստագրվող տարատեսակն անվանում են օրգանական գյուղատնտեսություն:

Գյուղատնտեսությունը, որպես արտադրության միջոցներ, օգտագործում է բնական ռեսուրսները՝ հողը, օդը, ջուրը, կենդանիներն ու մշակաբույսերը: Շրջակա միջավայրի վրա մարդածին ճնշման ավելացման ու բնական ռեսուրսների գերշահագործման հիմնական պատճառները պարենամթերքի նկատմամբ աշխարհում անընդհատ աճող պահանջարկն է, բարձր շահույթ ունենալու ձգտումն ու բնական ռեսուրսների պահպանության նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքը:

Ներկայումս թիրախ տարածաշրջանում վարվող ոչ կայուն գործելակերպերով և մեթոդներով գյուղատնտեսական արտադրությունը և կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը հանգեցրել են.

- ***Հողային ռեսուրսների դեգրադացիայի ու անապատացման երևույթների խորացման.*** տարածաշրջանում առկա գյուղատնտեսական նշանակության հողերի ավելի քան 40%-ում կան հողերի դեգրադացիայի անընդհատ խորացող խնդիրներ: Ըստ անապատացման դեմ պայքարի 2019-2020թթ. գործողությունների ազգային ծրագրի, երկրում գյուղատնտեսական հողերի մոտ 2/3-ը գտնվում են դեգրադացիայի տարբեր փուլերում:

- **Գյուղատնտեսական նպատակներով, ջրային պաշարների կուտակման ներուժի չօգտագործման և օգտագործման ծավալների կրճատման.** ռոտզվող վարելահողերը կազմում են թիրախային տարածաշրջանի ամբողջ վարելահողերի մոտ 5%-ը: Տարածքում առկա ջրամբարներում կուտակվող ջուրը գրեթե չի օգտագործվում թիրախ տարածաշրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի ռոտզման նպատակով:
- **Եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով գյուղատնտեսությանը հասցվող վնասների ավելացման.** 2020թ. կարկտահարությունից Շիրակի մարզի համայնքներին հասցված նյութական վնասը կազմել է 2.62 մլրդ դրամ (2019թ.-ին՝ 4.73 մլրդ դրամ), ցրտահարությունից գյուղատնտեսական մշակաբույսերին հասցված նյութական վնասը՝ 231,29 մլն դրամ, ուժեղ քամիներից՝ 70.72 մլն դրամ, իսկ սելավներից՝ 46.4 մլն դրամ: 2021թ. մարզում երաշտի հասցրած վնասների ֆինանսական գնահատականները դեռևս տրված չեն, բայց դրանց նույնիսկ մոտավոր գնահատականները և սպասվող սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները շատ մեծ են:
- **Այնպիսի հիվանդությունների և վնասատուների տարածմանը, որոնք բնորոշ չեն թիրախ տարածաշրջանին կամ որոնք նախկինում բնորոշ են եղել ցածրադիր շրջանների համա.** կեղծ ալրացող, պտղատուների բակտերիալ այրվածք, վնասատու որդաններ, հարավամերիկյան լուլիկի ցեց և այլն:
- **Ցածր արդյունավետ, մարզագետնատափաստանային արոտների ընդլայնման և առավել բարձրարժեք ենթալպյան և ալպյան արոտների կրճատման.** բնական կլիմայական գոտիների տեղաշարժի պատճառով սպասվում է ենթալպյան և ալպյան արոտների նվազում մինչև 19-22%-ով, ինչի հետևանքով կպակասի կաթի արտադրությունը:

4.2 Թիրախ տարածաշրջանի համայնքներում գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայմանները

Կայուն գյուղատնտեսության զարգացումը խթանելու և գյուղատնտեսական արտադրությունը արդյունավետ վարելու համար թիրախային տարածաշրջանն ունի մի շարք կարևորագույն մրցակցային առավելություններ ու չափազանց նպաստավոր նախապայմաններ.

1. Գյուղատնտեսական նշանակության հարուստ հողային ռեսուրսներ, որոնց գերակշիռ մասը կազմում են՝ բարձրորակ վարելահողերը, ընդարձակ արոտավայրերն ու խոտհարքները:
2. Մաքուր ջրաղբյուրներ, որոնք գերազանցապես ինքնահոս եղանակով, առանց շատ մեծ ներդրումների և սպասարկման ծախսերի, կարող են օգտագործվել ռոտզման նպատակով:

3. Տարածաշրջանն ունի փոքր ու միջին ջրամբարների, ջրատարների և ոռոգման տեղական ինքնահոս ցանցերի ստեղծման համար նպաստավոր ռելիեֆային պայմաններ:
4. Շատ հատիկաընդդեմային, կերային և տեխնիկական մշակաբույսերի աճեցման համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ՝ արևային ճառագայթման օպտիմալ մակարդակ և տևողություն, բուսաճական շրջանի չափավոր ժամանակահատված և տեղումների բավարար մակարդակ:
5. Բնական լանդշաֆտների մեծ բազմազանություն, չօգտագործվող վարելահողերի շատ քանակություն, որոնց զգալի մասը կարող են վերածվել կայուն գյուղատնտեսության սկզբունքներով մշակվող ագրոլանդշաֆտների:
6. Թիրախային տարածաշրջանի գրեթե բոլոր բնակավայրերն ունեն տուրիզմի զարգացման չիրացված իդեալական հնարավորություններ, որոնք համապատասխան ներդրումների իրականացման և ենթակառուցվածքների ձևավորման պայմաններում կարող են դառնալ բնության տուրիզմի, էկոտուրիզմի, գյուղական տուրիզմի, ագրոտուրիզմի, էթնոտուրիզմի, առողջարարական տուրիզմի, ուխտագնացային տուրիզմի, մշակութային տուրիզմի, գաստրոտուրիզմի և տուրիզմի այլ ուղղությունների զարգացման մի հրաշալի միջավայրի:
7. Թիրախ տարածաշրջանի բնակլիմայական և լանդշաֆտային հարուստ բազմազանությունը շատ լավ հնարավորություն է տալիս ըստ համայնքների և բնակավայրերի իրականացնել գյուղատնտեսության արտադրության գոտիական տեղաբաշխում ու մասնագիտացում:
8. Տարածաշրջանում կերահանդակների կառավարման կայուն գործելակերպերի ներդրման և պահվածքի այլընտրանքային ձևերի կիրառության պայմաններում հնարավորություն կա ավելացնել գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը:
9. Տարածաշրջանն ունի մեղվաբուծության զարգացման գերազանց պայմաններ և, առավել ևս, առկա պայմանները հնարավորություն են տալիս զարգացնել բիոդինամիկ կամ օրգանական մեղվաբուծությունը: Սա առավելագույնս բնականին մոտեցված մեղվապահության եղանակ է, մարդու շատ չնչին միջամտությամբ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ էկոլոգիապես մաքուր մեղվամթերքներ:
10. Թիրախային տարածաշրջանում առկա է գյուղատնտեսական տեխնիկայի բավարար քանակություն և դրանց շահագործման մասնագետներ:
11. Գյուղատնտեսական գործունեության ճիշտ կազմակերպման պայմաններում առկա է համապատասխան աշխատուժ:
12. Գյուղատնտեսական մթերքների սպառման համար առկա է համեմատաբար մոտ գտնվող սպառման շուկա (միջինը 25-35 կմ), բացի այդ միջպետական

նշանակության ավտոճանապարհային հատված, որի մոտ կարելի է հիմնել ճանապարհամերձ վաճառակետեր և գյուղատնտեսական շուկաներ:

13. Թիրախային տարածաշրջանի գյուղատնտեսական ռեսուրսները զերծ են մարդածին այնպիսի աղտոտող աղբյուրներից, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, քիմիական արտադրությունը և արդյունաբերական այլ աղտոտող խոշոր ձեռնարկությունները:
14. Թիրախ տարածաշրջանում առկա են կայուն և օգնական գյուղատնտեսության զարգացման համար գրեթե կատարյալ պայմաններ, հաշվի առնելով ֆիզիկաաշխարհագրական, բնակլիմայական, ագրոլանդշաֆտային, սոցիալ-ժողովրդագրական, ֆինանսատնտեսական, ագրոմշակութային և մի շարք այլ նախադրյալներ:

4.3 Թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, ագրոտեխնոլոգիաներն ու ագրոտեխնիկական միջոցառումները

Թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսությունը վարվում է չպլանավորված, հետխորհրդային ավանդական տեխնոլոգիաներով և գրեթե տարերային կերպով, ինչը շատ հաճախ առաջացնում է արդյունավետ մշակության խոչընդոտներ, բերքատվության քանակական և որակական խնդիրներ, ստացված բերքի իրացման հետ կապված դժվարություններ, արտադրված գյուղ. մթերքի գների կտրուկ տատանումներ և անցանկալի այլ սոցիալ-տնտեսական հետևանքներ: Այստեղ գյուղատնտեսական արտադրության մեջ գրեթե չեն կիրառվում ժամանակակից ագրոտեխնոլոգիաներ և ագրոտեխնիկական հնարքներ:

Ժամանակակից ագրոտեխնոլոգիան գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրական գործընթացների կառավարման տեխնոլոգիական գործողությունների շարք է, որնիրականացվում էնախատեսված բերքատվությանը և արտադրանքի որակին հասնելու նպատակով՝ ապահովելով տնտեսական արդյունավետությունն ու շրջակա միջավայրի անվտանգությունը:

Ագրոտեխնոլոգիաները, որպես կառավարման միասնական համակարգ, փոխկապակցված են ագրոլանդշաֆտի հետ՝ ցանքաշրջանառությունների, հողամշակության համակարգի, պարարտացման և բույսերի պաշտպանության միջոցով, այսինքն հանդիսանում են երկրագործության լանդշաֆտահարմարողական համակարգի բաղկացուցիչ մաս: Ագրոտեխնոլոգիաները նպատակ ունեն հաջորդաբար հաղթահարել այն բացասական գործոնները, որոնք սահմանափակում են մշակաբույսերի բերքատվությունն ու ստացվող բերքի որակը:

Ագրոտեխնիկական բույսերի մշակության հնարքների, միջոցառումների, մեթոդների ամբողջություն է, որի խնդիրն է ապահովել աճեցվող մշակաբույսերի բարձր բերքատվությունը՝ արտադրանքի միավորի հաշվով կատարելով նվազագույն աշխատանքային, նյութական և ֆինանսական ներդրումներ: Ժամանակակից

ագրոտեխնիկական հնարքներն ուղղված են նաև հողի բերրիության պահպանմանը և էրոզիայի տարբեր ձևերից պաշտպանությանը: Ագրոտեխնիկական իր մեջ ներառում է հողամշակությունը, պարարտացումը, սերմացուի և տնկանյութի նախապատրաստումը, ցանքսը և տնկումը, բույսերի մշակությունը, խնամքը և բերքահավաքը: Մշակության գործընթացում կիրառվող ագրոտեխնիկական հնարքների ընտրությունը, մի կողմից, պայմանավորված է տվյալ մշակաբույսի կենսաբանական առանձնահատկություններով, իսկ մյուս կողմից, մշակվող տարածքի հողակլիմայական պայմաններով:

Ագրոտեխնոլոգիաները ագրոտեխնիկական միջոցառումներից տարբերվում են ավելի ընդհանրականությամբ և համակարգվածությամբ, ինչպես նաև բուսաճական շրջափուլերին ուղղակիորեն հարմարեցվածությամբ:

Գյուղատնտեսության արդյունավետությունը մեծապես կախված է երկրագործության վարման համակարգից և ընտրված ագրոտեխնոլոգիայից, որոնց կարևորագույն բնութագրիչներից են ցանքաշրջանառությունը, հողամշակության եղանակը, պարարտացումը, բույսերի խնամքը և պաշտպանությունը:

Հաշվի առնելով, որ թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսական արտադրության մեջ գրեթե չեն կիրառվում նոր ագրոտեխնոլոգիաներ և ագրոտեխնիկական հնարքներ, հողամշակության նորագույն եղանակներ, պարարտացման, բույսերի խնամքի և պաշտպանության նոր սխեմաներ, կենդանիների պահվածքի արդիական ձևեր, կերահանդակների կառավարման պլանավորված և արդյունավետ գործելակերպեր, ապա նպատակահարմար է իրականացնել գործողություններ հետևյալ հիմնական ուղղություններով.

Բուսաբուծության ոլորտում

1. Բարելավել գյուղատնտեսության վարման մշակույթը, արդիականացնել և կատարելագործել կիրառվող ագրոտեխնոլոգիաներն ու ագրոտեխնիկական միջոցառումները,
2. Մշակության շրջափուլերում ներգրավել բարձրարժեք ու բարձր բերքատու մշակաբույսեր, ելնելով տարածաշրջանի բուսաճական և հողակլիմայական առանձնահատկություններից, ընտրել և մշակել միայն կլիմայակայուն և վաղահաս սորտեր:
3. Նախապատվություն տալ երկամյա և բազմամյա մշակաբույսերին, զարգացնել տեղական սերմնաբուծությունը, թաղարների և տնկիների աճեցումը, բանջարաբուստանային մշակաբույսերի դեպքում կիրառել բույսերի թաղարային աճեցման մեթոդները:
4. Բուսաճական շրջանի ընթացքում կիրառել պարարտանյութերի տարբեր տեսակներ՝ քիչ քանակությամբ և կոտորակային եղանակով, հաշվի առնելով՝

հողերի մակրո ու միկրոտարրերով ապահովվածությունը և մշակաբույսերի պահանջմունքները:

5. Ժամանակին և բարձր որակով իրականացնել անհրաժեշտ ագրոտեխնիկական միջոցառումները, որոնք ուղղված են էրոզիայից հողերի պաշտպանությանը, խոնավության կուտակմանը, մշակաբույսերի աճման և զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:
6. Պարտադիր կիրառել ցանքաշրջանառություն՝ դրանում ընդգրկելով երաշտադիմացկուն միամյա և բազմամյա մշակաբույսեր, այդ թվում ոչ ավանդական, որոնք կարող են նպաստել ոչ միայն երաշխավորված բերքի ստացմանը և եկամուտների աճին, այլ նաև գյուղատնտեսական հողերի բարելավմանը:
7. Արդյունավետ օգտագործել վաղ գարնանային խոնավության պաշարները՝ գարնանացան մշակաբույսերի ցանքսի ժամկետները փոփոխելու միջոցով:
8. Որպես հողերում օրգանական նյութերի քանակի ավելացման, դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունների բարելավման և ջրաջերմային ռեժիմի կարգավորման միջոց, կիրառել օրգանական պարարտանյութերով հողերի աշնանային պարարտացումը, բազմամյա բակլազգի կամ այլ մշակաբույսերի աճեցումը, կանաչ պարարտացումը և այլն:
9. Ջրախնայողություն և միաժամանակ բարձր բերքատվություն ապահովելու համար, կերային, տեխնիկական և բանջարաբոստանային մշակաբույսերի տնկարկներում և մշակովի արոտավայրերում կիրառել ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներ,
10. Ուժեղացնել հսկողությունն ու կանխարգելիչ միջոցառումների շրջանակը, տարածաշրջանը նոր վնասատուների, տարբեր հիվանդությունների հարուցիչների և մոլախոտերի ներթափանցումից և տարածումից պաշտպանելու համար:
11. Բույսերի պաշտպանությունն իրականացնել համեմատաբար անվտանգ միջոցների օգտագործմամբ և աշխատանքներն ուղղել հիմնականում հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ,
12. Կոշտ ազդեցություն ունեցող թունաքիմիկատները փոխարինել նոր սերնդի, էկոլոգիապես անվտանգ և բարձր արդյունավետ այլ միջոցներով՝ խթանելով կենսաբանական պատրաստուկների և բույսերի պաշտպանության բնական միջոցների կամ դրանց սինթետիկ համարժեքների օգտագործումը:
13. Վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի զարգացումն ու տարածումը սահմանափակել էկոլոգիապես անվտանգ միջոցառումների իրականացմամբ՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության միտումները:

14. Ներդնել կայուն և ճշգրիտ գյուղատնտեսության վարման համակարգերը՝ բույսերի պաշտպանության ծախսարդյունավետ և էկոլոգիապես անվտանգ կիրառությամբ, օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները:
15. Զարգացնել «պաշտպանված գրունտի» երկրագործությունը տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների տնամերձ հողատարածքներում (*ջերմոցային, ջերմատնային տնտեսություններ, կիսածածկ մշակություն, ծածկվող մարգեր, ագրոպանեղների կիրառություն և այլն*), ինչը կնվազեցնի կլիմայական բացասական ազդեցություններից կախվածությունն ու կավելացնի միավոր հողատարածքից ստացվող եկամուտները:
16. Ընդլայնել և արդիականացնել ոռոգման ցանցը, մեծացնել ջրային պաշարների կուտակման հզորությունները և ավելացնել ոռոգման ջրախնայող տեխնոլոգիաների կիրառման պրակտիկան:
17. Հաշվի առնել ոռոգվող հողերում դեգրադացիայի խորացման միտումները, որոշելով դրանց սեզոնային, տարեկան և երկարաժամկետ դինամիկան, ինչպես նաև կլիմայի փոփոխության ազդեցությունները:
18. Իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ ջրային պաշարների կուտակման և ավելցուկային ջրերի նպատակային ուղղորդման, ինչպես նաև հողապաշտպան տարբեր կառույցների վերանորոգման և նորերի կառուցման համար (*դարավանդներ, դրենաժներ, հակաէրոզային և հակահեղեղային համակարգեր, հունապատնեշներ և այլն*):
19. Ոռոգման բաց համակարգից անցում կատարել փակի, ներդնել ջրախնայող տեխնոլոգիաներ (կաթիլային, անձրևացման, ստորգետնյա և այլն) և կիրառել ջրման ժամկետները ճշգրտող տեխնիկական միջոցներ (*հողի խոնավաչափեր, սենսորներ, տենզիոմետրեր և այլն*):



20. Իրականացնել հողաբարելավման (մելիորացիա) համակարգի արդիականացումն օպտիմիզացիա՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխությանն ջրօգտագործման գերակայությունների երկարաժամկետ միտումները:

21. Գյուղական համայնքերի բնակչությանը ՏԻՄ-երին իրազեկել կայուն գյուղատնտեսության սկզբունքներին կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության վարման ու ջրերի կառավարման առանձնահատկությունների, սպասվող ռիսկերի և ռիմակայելու հնարավորությունների մասին:
22. Համայնքային մակարդակում խթանել գյուղատնտեսության ոլորտի կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանների մշակմանն ու ներդրմանը, տեղական մակարդակում ջրօգտագործման և ջրերի կառավարման արդյունավետ մեխանիզմների ձևավորմանը:
23. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ձևավորել բնակչության և ՏԻՄ-երին իրազեկման և վաղ ազդարարման մեխանիզմներ՝ կլիմայական ծայրահեղ դրսևորումներից և ջրային ռեսուրսների հետ կապված վտանգներից պաշտպանվելու համար:
24. Հրաժարվել բերքահավաքից հետո խոզանի և կենսաբանական թափոնների հրդեհման արատավոր գործելակերպից, որը հանգեցնում է հողերում կենսաբազմազանության ոչնչացման և հումուսի քանակության նվազման, հողերում դեգրադացիայի գործընթացների արագացման և դրանց բերքատվության մակարդակի էական անկումների:
25. Ջրի ավելորդ գոլորշիացումը կրճատելու նպատակով իրականացնել հողի մակերևույթի մուլչապատում՝ ցանքածածկ, որի համար կարելի է օգտագործել ինչպես սիթետիկ ծագում ունեցող ագրոթաղանթներ (*սպանբոնդ, ագրոտեկս և այլն*), այնպես էլ բնական նյութեր (խոտ, ծղոտ, թեփ, ցան և կենսաբանական այլ թափոններ):



26. Տարածաշրջանում ներդնել մշակաբույսերի պաշտպանության հակակարկտային ցանցային համակարգերը, որոնք տնամերձ տարածքներում, այգիներում և բանջարանոցներում գրեթե 100%-ով կանխում են կարկուտի բացասական ազդեցությունը, բացի այդ մեղմում քամիների ուժգնությունը, պաշտպանում

թռչուններից և խոշոր միջատներից, նվազեցնում ջրի գոլորշիացումը և օգնում ցրտահարությունների դեմ պայքարում:

27. Գյուղատնտեսական հողատեսքի, հատկապես, բազմամյա տնկարկների շուրջը, քամահար հիմնական ուղղություններում ստեղծել դաշտապաշտպան անտառաշերտեր, որոնք քամու վնասակար ազդեցությունը թուլացնող ամենահուսալի միջոցն են: Դրանք մշակաբույսերը պաշտպանվում են ոչ միայն քամիների՝ մեխանիկական, այլև ջերմային՝ տաք և սառը օդային հոսանքների վնասաբեր ազդեցություններից:
28. Կիրառել բույսերի խառը ցանքների մեթոդը՝ հաշվի առնելով դրանց համատեղելիությունը, փոխադարձ ազդեցությունն ու հողից սննդանյութերի նկատմամբ պահանջարկը (օրինակ՝ եգիպտացորեն, դդում, լոբի: Խառը ցանքսի դեպքում դդումը կանխում է հողից գոլորշիացումը, լոբին հողը հարստացնում է ազոտային միացիություններով, իսկ եգիպտացորենը հենք է հանդիսանում լոբու փաթաթվելու համար):
29. Թիրախ տարածաշրջանն ունի հատապտղաբուծության և այգեգործության զարգացման շատ մեծ ներուժ, հատկապես հաշվի առնելով ներկայումս մեծ թափ ստացող կիսաինտենսիվ և ինտենսիվ պտղատու այգիների հեռանկարը: Ցածրաձ պատվաստակալ կլոնների տնկիներով և նոր տեխնոլոգիաներով կառուցված այգիներն ունեն զգալի առավելություններ՝ ավելի պաշտպանված են եղանակային անկայուն պայմաններից, ունեն տնկիների մեծ խտություն(800-2500 ծառ/հա), բերքի տակ է մտնում հիմնումից 2 – 3 տարի հետո, արդյունավետ են օգտագործվում հողատարածքն ու խոնավության պաշարները, փոքր բարձրության (1.8-2 մետր) շնորհիվ հեշտ է խնամքն ու բերքահավաքը, ծածկված են հակակարկտային ցանցերով և կաթիլային ոռոգման դեպքում համեմատաբար քիչ ջուր են պահանջում:
30. Հատապտղագործությունը տարածաշրջանում զարգանալու անսահման ներուժ ունի, հատկապես հաշվի առնելով դրանց բարձր գինն ու շուկայական բարձր պահանջարկը: Թիրախ տարածաշրջանում հատապտղագործության զարգացումը և նոր ագրոտեխնոլոգիաների կիրառությամբ դրանց աճեցումը, ինչպես նաև հատապտուղների երկարատև պահպանության և վերամշակման կարողությունների զարգացումն ու համապատասխան հզորությունների ստեղծումը, նկատելիորեն կարող է խթանել համայնքի բնակիչների եկամուտների աճը, նրանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը, փոքր ու միջին ձեռնարկատիրության աշխուժացումը և գյուղացիական տնտեսությունների համաչափ ու կայուն զարգացումը:

Անասնաբուծության ոլորտում

1. Բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության մակարդակը, տեղական ցեղատեսակները տոհմային աշխատանքների արդյունքում բարելավելու միջոցով:
2. Բարձրացնել անասնաբուժական տնտեսությունների կողմից կերահանդակների օգտագործման և գյուղատնտեսական գործունեության կազմակերպման արդյունավետությունը:
3. Բարձրացնել անասնաբուծության կերապահովվածության մակարդակը՝ տարածաշրջանում խթանելով կերարտադրական ձեռնարկությունների գործունեությունն ու կազմակերպելով կերային մշակաբույսերի արդյունավետ մշակություն:
4. Կերակրման գործելակերպի բարելավում, կերերի մշակում, սննդակարգում հատիկավոր խտանյութերի ու կերային բնական հավելումների ավելացում, դրանց մարսելիության մակարդակի բարձրացում՝ կենդանիների արագ քաշաճի ապահովման համար:
5. Գյուղացիական տնտեսություններին իրազեկել կենդանիների պահվածքի արդյունավետ եղանակների և անասնաբուժական տնտեսությունների կառավարման համապարփակ մոդելների վերաբերյալ:
6. Բարձրացնել անասնաբուծության ոլորտում հիվանդությունների վաղ կանխարգելման կարողությունների մակարդակը, խթանելով հիվանդությունների սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ կանախարգելման մեխանիզմները:
7. Կարգավորել գյուղատնտեսական տարբեր ենթակառուցվածքների և կառավարման հաստատությունների հետ կապված խնդիրները (օրինակ՝ արոտների ոռոգման և ջրաբքիացման ենթակառուցվածքներ, սպանդանոցներ և այլն),
8. Ներդնել գյուղատնտեսական կենդանիների նույնականացման և հաշվառման արդյունավետ համակարգ, ձևավորել կենդանիների նույնականացման էլեկտրոնային շտեմարան, ինչը թույլ կտա բարձրացնել կենդանիների հիվանդությունների վերահսկելիությունը:
9. Ֆերմերների շրջանում բարձրացնել արդյունավետ գյուղատնտեսական և մարքեթինգային գործելակերպերի վերաբերյալ գիտելիքների մակարդակը,
10. Խթանել ներդրումները գյուղատնտեսական արտադրության և շուկայավարման ոլորտում,
11. Փոքր տնտեսությունների համար բարձրացնել կենդանական ծագման մթերքների վերամշակման օբյեկտների և շուկաների արդյունավետ հասանելիությունը,
12. Բարձրացնել անասնաբուժական ծառայության հասանելիությունն ու արդյունավետությունը, վարակիչ հիվանդությունների կանխարգելումն ու վերահսկումը, ինչպես նաև կենդանական ծագման մթերքների նկատմամբ անասնաբուժասանիտարական հսկողությունը:

13. Իրականացնել անասնաբուժական թափոնների պատշաճ կառավարում, փոքր տնտեսությունների և/կամ դրանց խմբերի համար կազմակերպել կենսագազի և օրգանական պարարտանյութերի, ինչպես նաև բիոհումուսի արտադրություն:

Վերահանդակների կառավարման ոլորտում

1. Սահմանել արոտավայրերում արածեցվող կենդանիների թույլատրելի խտությունը համաձայն սահմանված կարգի (ՀՀ կառավարության 14.04.2011թ. №389-Ն որոշում):
2. Ոչխարների և այծերի արածեցումը պահել խիստ հսկողության տակ, քանի որ վերջիններս էական բացասական ազդեցություն են գործում արոտային հողերի վրա: Մ.ե.կ.-ների կճղակների ազդեցությամբ արոտային հողը ենթարկվում է ճնշման 5,4 կգ/սմ² ուժով, այն դեպքում, երբ խ.ե.կ.-ների դեպքում ճնշումը կազմում է 5,1 կգ/սմ², իսկ ձիերի դեպքում՝ 2,6 կգ/սմ²: Ոչխարները արոտավայրի միավոր տարածքի վրա նույն ժամանակահատվածում թողնում են կրկնակի անգամ ավելի խիտ ոտնահետքեր, քան ձիերն ու խ.ե.կ.-ները:
3. Արածեցվող կենդանիների պառկելատեղերը սահմանել համաձայն վերը նշված կարգի պահանջների:
4. Քանի որ ՀՀ-ի տարածքները հիմնականում ունեն կտրտված ռելիեֆ, ապա արոտավայրերի տարբեր հատվածներում բուսական համակեցություններն ունեն տարբեր վեգետացիայի տևողություն, այդ պատճառով արոտավայրային մասիվի տարբեր հատվածների համար սահմանել արածեցման տարբեր ժամկետներ:
5. Հստակեցնել ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների արեալները կերհանդակների տարածքներում և այդ հատվածներում արածեցումը և խոտքաղը կամ ընդհանրապես արգելել, կամ կազմակերպել ագրոբնապահպանների անմիջական վերահսկողության պայմաններում:
6. Դադարեցնել 30-35°-ից ավելի բարձր թեքություն ունեցող լանջերին արածեցումը, անկախ կենդանատեսակից և տարվա ժամանակից, հողի էրոզիոն գործընթացները և բուսական համակեցությունների ոչնչացումը կանխարգելելու նպատակով:
7. Հստակ սահմանել արոտների օգտագործման ժամկետներ և տևողություն, ելնելով տվյալ տարածքի արոտների և այդ տարվա բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից:
8. Արգելել վաղ գարնանային և ուշ աշնանային արածեցումը, քանի որ առավելապես այդ ժամանակահատվածներում է արոտների բուսականությունն առավել խոցելի:
9. Սահմանել նախիրների և հոտերի կազմման թվային սահմանափակում՝ խ.ե.կ.-ների նախիրը չպետք է կազմվի 150 գլխից ավելի կենդանիներից, իսկ ոչխարներինը՝ 200 գլխից ավելի: Սրանից մեծ կենդանախմբերը ուժեղացնում են արածեցման բացասական ազդեցությունը բուսածածկույթի և հողի վրա:
10. Ազատ կամ անհամակարգ արածեցման եղանակից անցնել կենդանիների արածեցման հերթական կամ տեղամասային եղանակին, որը մոտ 25-30%-ով

կրճատում է արածեցման բացասական ազդեցությունը և բարձրացնում է արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը:

11. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը, համաձայն գործող կարգի, բաժանել սահմանված թվով արոտավանդակների և խստիվ հետևել դրանց օգտագործման ժամկետներին և նորմերին:
12. Արոտավայրերում սահմանել կենդանիների տեղաշարժման օպտիմալ երթուղիներ, քանի որ կենդանիների երկարատև հերթաշար և ուղղագիծ տեղաշարժերը հանդիսանում են բուսածածկույթի ոչնչացման և հողի էրոզիայի պատճառ:
13. Կերհանդակների խոնավ հատվածներում արգելել գարնանային և վաղ ամառային միջամտությունները, քանի որ այդ ժամանակահատվածը համընկնում է հազվագյուտ և պահպանման կարիք ունեցող բույսերի ծաղկման ու թռչունների բնադրման շրջանի հետ:
14. Արոտավայրերի երկարաժամկետ, կայուն և առավել արդյունավետ կառավարման նպատակով կազմել «Արոտների կառավարման պլան», որը մանրամասն սահմանվում է արոտների օգտագործման կարգը, ձևը և ռեժիմը, ինչպես նաև արոտաշրջանառությունը:

5. ԹԻՐԱԽ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Թիրախ տարածաշրջանի գյուղական բնակավայրերն աստիճանաբար կորցնում են իրենց գրավչությունը՝ որպես բնակվելու և աշխատելու համար նպաստավոր տարածք՝ անբավարար կենսապայմանների, եկամուտների ցածր մակարդակի և մարդու հիմնական պահանջմունքների բավարարման ոչ արդիական միջավայր լինելու պատճառով: Տարածաշրջանում առկա են տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական բնույթի լրջագույն խնդիրներ: Մարզային, համայնքային և բնակավայրային մակարդակներում տարածքների կառավարման արդյունավետության վրա խիստ բացասաբար է անդրադառնում համակողմանի մոտեցման բացակայությունը, որը պարզապես պետք է լինի գյուղական տարածքների զարգացման հիմքը՝ իրար կապելով և ամբողջացնելով համայնքների տնտեսական, սոցիալական, բնապահպանական և կազմակերպական հնարավորություններն ու կարողությունները:

Այս առումով անհրաժեշտ է որոշել տարածաշրջանի, համայնքների և առանձին բնակավայրերի զարգացման ներուժի տեսակետից գերակա ուղղությունները, մշակել և գործնականում ներդնել գյուղական տարածքների կառավարման նոր մոդելներ՝ մրցակցային սկզբունքների վրա հիմնված և ղեկավարման նոր մոտեցումներով, որոնք ապահովում են գյուղական տարածքներում առկա մարդկային ներուժի առավելագույն

ներգրավում և զարգացում, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարում և եկամուտների արդարացի բաշխում, նոր ներդրումների ներգրավման նախապայմանների ստեղծում և գործուն մեխանիզմների ձևավորում:

Գյուղական համայնքների զարգացման ժամանակակից ծրագրերը պետք է հիմնված լինեն համակողմանի մոտեցման վրա, որոնք ընդգրկում են ոչ միայն գյուղատնտեսական արտադրության ոլորտը, այլև սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքները, զբոսաշրջությունը և տնտեսական գործունեության այլ ուղղություններ, որոնք նպաստում են գյուղական համայնքների տնտեսության տնտեսական արդյունավետության բարձրացմանը և գյուղական բնակավայրերում կյանքի որակի բարելավմանը:

Այնուհանդերձ, թիրախ տարածաշրջանում տնտեսության զարգացման առաջնային ճյուղը եղել և մնում է գյուղատնտեսությունը, որի զարգացումն ու արդիականացումը Շիրակի մարզի այս հատվածի համար առաջնահերթային և կարևորագույն խնդիր է: Ոլորտի զարգացման մեջ տարածաշրջանի բոլոր մակարդակի դերակատարներն ունեն իրենց ուրույն առաքելությունն ու խնդիրները, ինչը կփորձենք ավելի մանրամասն վերլուծել ստորև:

5.1 Թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական դերակատարները և դրանց անելիքները

1. Գյուղացիական տնտեսություններ և գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող կազմակերպություններ (կոոպերատիվներ, անհատ ձեռնարկատերեր, ՍՊԸ-ներ, ՓԲԸ-ներ և այլն):

Այս խմբի դերակատարները կարող են օրենքի շրջանակներում կամավոր կերպով կնքել գյուղատնտեսական արտադրության ոլորտին վերաբերող համաձայնագրեր, ձևավորել շահերի պաշտպանության, ջատագովության և լոբբինգի նախաձեռնություններ, ստեղծել ֆերմերային ակումբներ, ասոցիացիաներ, ցանցեր, փոխադարձ կապ ապահովելու, տեղեկատվության փոխանակման, գյուղ. մթերքի փոխանակման, վաճառքի կամ համագործակցության ու կոոպերացիայի այլ մեխանիզմներ, գրանցել սպառողական, արտադրական կամ գյուղատնտեսական կոոպերատիվներ, հիմնադրամներ և այլ կառույցներ:

2. Գյուղատնտեսական մթերքների պահպանությամբ, վերամշակմամբ, առքուվաճառքով և արտահանմամբ զբաղվող կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ (կաթի վերամշակման ձեռնարկություններ, սպանդանոցներ, կերերի արտադրամասեր, պահածոների արտադրություններ, վաճառատների ցանցեր, վաճառակետեր և այլն):

Կարող են իրականացնել գյուղատնտեսական արտադրությամբ, պահպանությամբ, վերամշակմամբ, առքուվաճառքով և արտահանմամբ զբաղվող անհատների և կազմակերպությունների կարիքների և պահանջների քարտեզագրում, իրազեկման

աշխատանքներ, հանդիպումներ, քննարկումներ, գյուղատնտեսական բերքի տոների, փառատոնների, մրցույթների, դասընթացների, խորհրդատվությունների, փորձի փոխանակման այցեր, կրթական էքսկուրսիաների և դաշտային գործնական ուսուցումների, ինչպես նաև այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում:

Կարող են կնքել գյուղատնտեսության ոլորտում համագործակցության հուշագրեր, համաձայնագրեր, պայմանագրեր, ձևավորել շահերի պաշտպանության, ջատագովության և լոբբինգի նախաձեռնություններն այլն: Կարող են կազմակերպել գյուղատնտեսական շուկաներ, ճանապարհամերձ վաճառակետեր և այլն:

3. Գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման կառույցներ, մասնավորապես, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն իր վեց վարչություններով.

- «Գյուղատնտեսության առաջնային արտադրանքի»,
- «Մանրամթերքի անվտանգության»,
- «Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման»,
- «Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման»,
- «Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի»,
- «Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման» վարչություններ:

Այս կառույցն իր վարչություններով պետք է մշակի երկրում գյուղատնտեսության ոլորտի առաջընթաց զարգացումը, պարենային ապահովության և անվտանգության ապահովումը, ինչպես նաև բնական ռեսուրսների ու ագրոլանդշաֆտների կայուն կառավարումն ապահովող քաղաքականություն, դրանից բխող ռազմավարություն և գործողությունների ծրագրեր, պատասխանատու լինի այդ քաղաքականության իրականացման և համապատասխան արդյունքների ձեռքբերման, ինչպես նաև այդ գործընթացի հսկողության և վերահսկողության համար: Երկրում գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացում ապահովելու նպատակով պետք է կարողանա վերլուծել և կանխատեսել համաշխարհային տնտեսության զարգացման և կլիմայի փոփոխության ազդեցությունների միտումները:

4. Պետական համակարգի այլ կառույցներ և կազմակերպություններ.

- «Գյումրու սելեկցիոն կայան» ՓԲԸ,
- «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ,
- «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ,
- «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ,
- ՀՀ ԷՆ «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց,
- «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ,

- «Մննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ:

Այս կառույցները շատ բազմազան են և ունեն իրենց առանձնահատուկ գործառնությունները, բայց շատ կարևոր է, որ կարողանան շարունակական կապ ապահովել գյուղատնտեսական արտադրությամբ, պահպանությամբ, վերամշակմամբ, առքուվաճառքով և արտահանմամբ զբաղվող կազմակերպությունների և անհատ ձեռներեցների հետ, քաջածանոթ լինեն նրանց պահանջներին և կարիքներին, ապահովեն գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական նորարարությունների փոխանցումը տնտեսվարողներին, հետևեն բնական էկոհամակարգերի վրա գյուղ. ոլորտի բացասական ազդեցության նվազեցմանը և մշակեն ու ներդնեն արդյունավետ ծրագրեր՝ գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության իրականացման և ոլորտի տնտեսվարողների կողմից արդյունավետ տնտեսական գործունեություն ծավալելու համար:

5. Տարածքային կառավարման մարմինները կարող են մշակել գյուղատնտեսության տարածքային զարգացման գործողությունների ծրագրեր և ստանձնել պատասխանատվություն համայնքներում դրանց ներդրման և վերահսկողության համար:

ՀՀ Շիրակի մարզպետը գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառում **օրենքով սահմանված կարգով իրականացնում է կառավարման և համակարգման, աջակցության և ընթացիկ հետևյալ գործառնությունները.**

- տիրապետում և օգտագործում է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը,
- կազմում է մարզի հողային հաշվեկշիռը,
- վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը,
- վերահսկում է մարզի սահմանանիշերի և գեոդեզիական կետերի պահպանումը,
- իրականացնում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցումը, պահպանումը և շահագործումը, միջոցներ է ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ,
- համակարգում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքները
- համակարգում է մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքները,

- համակարգում է մարզի տարածքում ջրատնտեսական և ոռոգման կազմակերպությունների գործունեությունը,
- համակարգում է մարզի տարածքի սերմնաբուծական կազմակերպությունների, տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեությունը,
- աջակցում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտում տնտեսավարող այլ սուբյեկտներին՝ արտադրության կազմակերպման և զարգացման գործում,
- համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում իրականացնում է պատվիրատուի գործառույթներ,
- մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով ներկայացնում է կառավարության հաստատմանը,
- օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրեր է կնքում հողի ու ամրակայված գույքի սեփականատերերի և (կամ) հողօգտագործողների հետ՝ մարզի տարածքում մարզային ենթակայության օբյեկտների կառուցման համար համապատասխան հողի ու ամրակայված գույքի օգտագործման և դրանց հետ կապված փոխհատուցումների վերաբերյալ:

6. Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի Համայնքի պարտադիր խնդիրներից է գյուղատնտեսության զարգացման խթանումը: Հատկապես համայնքներում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը մշտապես պետք է լինի համայնքի ավագանու, ղեկավարի և ՏԻՄ աշխատակազմի ուշադրության կենտրոնում, քանի որ դա տվյալ համայնքների տնտեսության առաջնային ուղղությունն է:

Համայնքի ավագանին կարող է մասնագետների օգնությամբ մշակել և որպես համայնքի զարգացման ծրագրի հավելված հաստատել «Համայնքի գյուղատնտեսության ոլորտի զարգացման ծրագիր», որը կնախատեսի ոլորտի զարգացման կոնկրետ գործողություններ և քայլեր, կարող է մշակել «Գյուղատնտեսության ոլորտի կլիմայի փոփոխության հարմարվողականության պլան», «Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման տեղական ծրագիր» և այլն:

Համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորություններից է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարումը.

Համայնքի ղեկավարի գյուղատնտեսության բնագավառի լիազորություններից է.

- համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.
- իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում,
- իրականացնում է գյուղատնտեսական զարգացման ծրագրեր, աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը:

Այսօրվա իրողությունների պայմաններում գյուղական համայնքներում բավականին մեծ է համայնքի ղեկավարի դերակատարությունը, չնայած գյուղատնտեսության ոլորտում նրա լիազորությունները բավականին սահմանափակ են, բայց գյուղատնտեսական զարգացման ծրագրերի միջոցով համայնքային իշխանությունները կարող են էական դրական ազդեցություն ունենալ ոլորտի կայուն զարգացման վրա: Շատ կարևոր են գյուղացիական տնտեսությունների իրազեկման, նոր տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքների փոխանցման, փորձացուցադրական տեղամասերի ստեղծման, փորձի փոխանակության այցերի, ուսուցումների և խորհրդատվությունների տրամադրումն ու այլ կառույցների կողմից համայնքում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի համաֆինասավորումը:

7. Գյուղատնտեսական տարբեր ենթակառուցվածքների կառավարման մարմիններ

Այստեղ գյուղատնտեսության ոլորտի հետ ուղղակիորեն առնչվող հիմնական կառույցները Ջրավազանային կառավարման մարմիններն են, ջրօգտագործողների ընկերություններն ու ջրօգտագործողների միությունները: Վերջին երկուսը, ըստ ՀՀ օրենքի, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ են և, առաջնորդվելով հանրային շահերով, իրականացնում են ոռոգման համակարգի շահագործումն ու պահպանումը: Ոռոգման համակարգերի մեջ են մտնում ոռոգման և ցամաքուրդային ջրանցքները, խողովակաշարերը, հիդրոտեխնիկական կառուցվածքները, հորերը, պոմպակայանները, ջրամբարները, լճակները՝ ճանապարհներով, շենքերով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով, այդ թվում՝ ջրակոհամակարգերի պահպանման գոտիներով:

Ջրօգտագործողների ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում իր սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողներին, իսկ Միությունը, ջրավազանային կառավարման պլանների համաձայն, իր սպասարկման տարածքի Ընկերություններին: Վերջիններս իրականացնում են միայն ոռոգման համակարգի շահագործման և պահպանման գործառույթներ:

Այս ընկերությունները կառավարման առումով էական բարեփոխումների և իսկապես ջրօգտագործողների կողմից կառավարման մարմիններ դառնալու անհրաժեշտություն ունեն: Սրանց կառավարմանը հանրության մասնակցությունը և իր շահերի պաշտպանության ուղղությամբ քայլերի իրականացումը կարող է հասցնել զգալի դրական փոփոխությունների:

8. Գյուղատնտեսական մթերքների, ապրանքների, պարագաների, սարքավորումների և օգնական այլ նյութերի առքուվաճառքի և ոլորտային ծառայությունների մատուցման կազմակերպություններ, էլեկտրոնային հարթակներ և սոցիալական ցանցերի էջեր(<https://www.list.am/>, <https://arajark.am/>, *Ֆեյսբուքյան էջեր՝ «Բերքառատ Հայաստան», «Բերքառատ շուկա», «Բերքառատ ջերմոց» և այլն):*

Գյուղատնտեսական մթերքների և ոլորտին առնչվող նյութերի, պարագաների, սարքավորումների և այլ ապրանքների առքուվաճառքի, մատակարարման և ներկրման ոլորտը վերջին տարիներին բավականին զարգացել է, բայց անհրաժեշտություն կա էլ ավելի զարգացնելու, մասնավորապես, գյուղ. ոլորտի տնտեսավարողների գիտելիքներն ու հմտությունները տարբեր էլեկտրոնային գործիքներից օգտվելու տեսակետից:

9. Կրթական հաստատություններ և ուսուցման էլեկտրոնային հարթակներ

Այս առումով մարզում գործում են Շիրակի պետական համալսարանը և Ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջը, որոնք պատրաստում են ոլորտային մասնագետներ: Բայց այս առումով այսօր հնարավորությունները շատ ընդլայնված են, և հնարավոր է դասընթացների մասնակել և գյուղատնտեսական ոլորտի կրթություն ստանալ նաև միջազգային հեղինակավոր հաստատություններում: Ցավոք, թիրախ տարածաշրջանի համայնքների տնտեսավարողների շրջանում շատ ցածր է գյուղատնտեսական ոլորտի նոր գիտելիքների նկատմամբ պահանջարկը, որը տարածաշրջանում գյուղատնտեսական արտադրության ամենամեծ խոչընդոտներից մեկն է:

10. Քաղաքացիական հասարակության կառույցներ

Այս կառույցների խմբին են պատկանում շահույթ չհետապնդող բավականին շատ կառույցներ և կազմակերպություններ՝ ՀԿ-ներ, հիմնադրամներ, միջազգային կազմակերպություններ և այլն: Տարածաշրջանում գործող կառույցների ներդրումը գյուղատնտեսական ոլորտի զարգացման մեջ բավականին փոքր է, բայց վերջին տարիներին սկսել է աճել հետաքրքրությունը ոլորտի զարգացման և նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

Գյումրի քաղաքում գործող մի շարք կազմակերպություններ զգալի ներդրում են ունեցել գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղությամբ տարածաշրջանում տարբեր ծրագրեր իրականացնելու ուղղությամբ, բայց այդ ջանքերը շատ քիչ են տեսանելի դրական տեղաշարժեր ապահովելու համար:

Այս խմբի դերակատարները կարող են էական մասնագիտական աջակցություն ցույց տալ տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններին, բարձրացնել վերջիններիս իրազեկության և գիտելիքների մակարդակը գյուղատնտեսական արտադրության կայուն և կանաչ սկզբունքների, նոր ագրոտեխնիկական հնարքների և ագրոտեխնոլոգիաների, նոր բարձրաժեք մշակաբույսերի, մշակության արդյունավետ տեխնոլոգիաների, բնական ռեսուրսների խելամիտ կառավարման, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի կենսաբանական միջոցների և շատ այլ ուղղություններով: Կարող են ձևավորել գյուղ. ոլորտի տնտեսավարողների շահերի պաշտպանության, ջատագովության և լոբբինգի նախաձեռնություններ, աջակցել ֆերմերային ակումբների, ասոցիացիաների, ցանցերի,

կոռպորատիվների, հիմնադրամների և այլ կառույցների ստեղծմանն ու զարգացմանը: Կարող են մշակել զարգացման ծրագրեր, իրականացնել մոնիտորինգներ, հետազոտություններ, գնահատումներ և այլ աշխատանքներ:

Տարածաշրջանի գյուղատնտեսության ոլորտի զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեն նաև գյուղատնտեսական մթերքների սպառողները, զբոսաշրջային տարբեր կազմակերպությունները և գործակալությունները, միջազգային դոնոր կազմակերպությունները:

6. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առկա տվյալների համադրումը ցույց է տալիս, որ Շիրակի մարզի հյուսիսային համայնքներն ունեն զարգացման մի շարք մրցակցային առավելություններ, որոնցից են գյուղատնտեսական արտադրությունն անվտանգ և արդյունավետ կազմակերպելու հրաշալի նախապայմանները. բնական ռեսուրսներ՝ ազատ և բերքատու հողեր, ոռոգման մաքուր ջրեր, նպաստավոր բնակլիմայական պայմաններ և ագրոլանդշաֆտներ, ինչպես նաև, համապատասխան աշխատուժ և համեմատաբար մոտ գտնվող սպառման շուկա:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ թիրախ տարածաշրջանի համայնքներում անասնապահությունը բավականին զարգացած ուղղություն է, բայց ցածր է դրա տնտեսական արդյունավետությունը, իսկ բուսաբուծությունն առանձնապես զարգացած չէ և չի ապահովում բարձր եկամտաբերություն: Բանջարաբուծությունը, այգեգործությունն ու հատապտղաբուծությունը, որպես ոլորտներ, այստեղ խիստ թույլ են զարգացած, չնայած նրան, որ համայնքն ունի այդ ուղղությունների զարգացման համար բոլոր նպաստավոր պայմանները, և կան դրանց արդյունավետ ներդրման ժամանակակից ագրոտեխնոլոգիաներ ու գործելակերպեր:

Տարածաշրջանում աճեցված մրգերը, հատապտուղներն ու բանջարեղենն ունեն բարձր սննդարար արժեք և համային հատկանիշներ, ինչը պայմանավորված է կլիմայական առանձնահատկություններով՝ արևային ճառագայթման բարձր ինտենսիվությամբ, ցերեկային առավելագույն և գիշերային նվազագույն ջերմաստիճանների մեծ տարբերությամբ, ինչպես նաև, ջրերի և հողերի հարուստ միկրոտարրային կազմով, որոնք ապահովում են բույսերում երկրորդային սինթեզի նյութերի մեծ քանակությունների առաջացումն ու կուտակումը:

Քանի որ տարածաշրջանն ունի բավականին խիստ կլիմայական պայմաններ, ապա շատ վնասատուներ այստեղ պարզապես չեն կարողանում ձմեռել, բացի այդ, բուսաճական շրջանի ընթացքում վնասատուների բազմացման և տարածման վրա բացասական ազդեցություն է ունենում ցերեկային և գիշերային ջերմաստիճանների

մեծ տարբերությունը, ինչը հնարավորություն է ընձեռում թիրախային համայնքերում կազմակերպել թունաքիմիկատներից զերծ բանջարեղենի, մրգերի և հատապտուղների արտադրություն:

Անասնապահությունից ստացվող կենսաբանական թափոնները տարածաշրջանում կամ ընդհանրապես չեն օգտագործվում, կա չեն օգտագործվում արդյունավետ կերպով, բայց դրանք օրգանական պարարտանյութերի արտադրության համար լավագույն հումքն են և, ճիշտ կազմակերպման դեպքում, դրանք կարող են նպաստել, որ համայնքները ոչ միայն ապահովված լինեն օրգանական պարարտանյութերով, այլ նաև կարողանան կենսագազի արտադրության շնորհիվ բավարարել իրենց էներգետիկ կարիքների զգալի մասը:

Տարածաշրջանում արտադրված մսամթերքն ու կաթնամթերքն ունեն բարձր համային հատկանիշներ և սննդային արժեք, բայց գնային առումով այդ հանգամանքը ոչ մի դրսևորում չի ստանում: Անհրաժեշտ է տարածաշրջանում խթանել կենդանական ծագման արդեն մոռացված կամ լրիվ նոր արտադրատեսակների արտադրությունը, ինչը կարող է խթանել այդ ոլորտից լրացուցիչ արժեքի ստեղծմանը:

Շիրակի մարզի հյուսիսային համայնքերում, ելնելով աշխարհագրական դիրքից և բնակլիմայական պայմաններից, բնական էկոհամակարգերի պահպանության առաջնահերթություններից և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակից, անհրաժեշտ է էականորեն բարեփոխել գյուղատնտեսության վարման մշակույթը, բարձրացնել բուսաբուծության տնտեսական արդյունավետությունը՝ ներդնելով նոր, համեմատաբար քիչ ֆինանսական ներդրումներ պահանջող և բարձր եկամուտներ ապահովող մշակաբույսեր, որոնց մշակությունը կներառի ագրոտեխնոլոգիական ժամանակակից տարբեր բաղադրիչներ և լուծումներ, նախադրյալներ կստեղծի ձեռնարկատիրական գործունեության զարգացումը խթանելու և բնակիչների եկամուտների զգալի աճի հասնելու համար:

Ընդհանուր բնույթի առաջարկություններ

1. Տարածաշրջանի համայնքներում իրականացնել գյուղատնտեսության վարման կայուն և օրգանական եղանակների վերաբերյալ իրազեկության միջոցառումներ՝ տեղեկատու թերթիկների տպագրություն և տարածում, համայնքի կայքում ու տարբեր բնակավայրերի տեղեկատվական վահանակների վրա նյութերի տեղադրում և այլն:
2. Բնակչությանը ծանոթացնել կայուն և օրգանական գյուղատնտեսության վարման պայմաններում բույսերի մշակության առանձնահատկություններին, հիվանդությունների կանխարգելման և վնասատուների դեմ պայքարի ինտեգրացված մեթոդներին, անցկացնել միջոցառումներ գյուղատնտեսական վերամշակման և մարքեթինգի վերաբերյալ,

3. Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ և համայնքների համաֆինանսավորմամբ իրականացնել կայուն և օրգանական մշակության լավագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնացուցադրական տեղամասերի հիմնում՝ հակակարկտային ցանցեր, կաթիլային ոռոգման համակարգեր, ցանքածածկ, հողմապաշտպան ծառաշերտեր և այլն:
4. Իրականացնել փորձի փոխանակության այցելություններ և տեղեկատվական հանդիպումներ, Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններում գործող կայուն և օրգանական մշակության և վերամշակման առաջավոր փորձ ունեցող տնտեսությունների հետ,
5. Հիմնադրել ոչ ավանդական, բարձրարժեք մշակաբույսերի բազմացման և տարածման համայնքային տնկարանային տնտեսություն, որը կդառնա համայնքի տարածքում և ողջ Շիրակի մարզում նմանատիպ մշակաբույսերի մասնագիտացված բազմացման և տարածման առաջին տարածաշրջանային կենտրոնը:
6. Տարածաշրջանի համայնքներում աջակցել գյուղատնտեսական վերամշակման ուղղությամբ տարբեր բիզնեսների հիմնմանը՝ կաթի հավաքման կետեր, պանրի նոր, յուրահատուկ տեսակների փոքր արտադրամասեր, սառնարանային տնտեսություններ, չորանոցներ, պահածոների արտադրություն, բուսական թեյերի, զովացուցիչ ըմպելիքների արտադրություն և այլն:
7. Հահամայնքային և մարզային մակարդակներում կազմակերպել բերքի փառատոններ և կայուն գյուղատնտեսության քարոզչության տարբեր միջոցառումներ:
8. Համայնքների բնակիչների շրջանում նոր, բարձրարժեք մշակաբույսերի աճեցումը խթանելու նպատակով մի քանի տարի շարունակ տրամադրել այդ բույսերի սերմեր, տնկիներ և թաղարներ:
9. Համայնքի բնակիչներին տրամադրել գյուղատնտեսության վարման կայուն և օրգանական եղանակների գործնական կիրառության վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և համապատասխան գրականություն:
10. Տարածաշրջանի համայնքների բնակիչներին պարբերաբար տեղեկատվություն տրամադրել կայուն և օրգանական գյուղատնտեսության ոլորտում տնտեսությունների հիմնման և նոր ագրոտեխնոլոգիաների ներդրմանը աջակցող պետական և ոչ պետական աջակցությունների և ծրագրերի վերաբերյալ:
11. Տարածաշրջանի գյուղատնտեսական մթերքներ արտադրողների շրջանում խթանել համագործակցությունը և փոխշահավետ կոոպերացիայի զարգացումը:
12. Ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների հողակտորների արդյունավետ օգտագործման նպատակով կազմել հողամշակության և ցանքաշրջանառության նախագծեր, որոնք հնարավորություն կտան ցույց տալ դրանց արդյունավետ օգտագործման հեռանկարները:

Թիրախային տարածաշրջանին առանձնահատուկ առաջարկություններ

1. Թիրախ տարածաշրջանում գյուղատնտեսության արտադրության ոլորտում ավելի նպատակահարմար և արդյունավետ է կենտրոնանալ փոքր հողակտորների ինտենսիվ և օրգանական մշակության, կայուն սկզբունքներով հողաբարելավման և բարձր եկամուտներ ստանալու վրա, քան անջրդի վարելահողերում բարձր ռիսկային գյուղատնտեսական գործունեություն ծավալելու վրա:
2. Հողամշակությունն իրականացնել փոքր, անհատական օգտագործման գյուղատնտեսական տեխնիկաների միջոցով, որոնք ապահովում են հողի մակերեսային մշակություն, չեն ճզմում և խտացնում բերրի հողաշերտը և հնարավորություն են տալիս մշակությունն իրականացնել ըստ անհրաժեշտության՝ ճիշտ ժամանակին, ինքնուրույն, ավելի փոքր տարածքներում, քիչ ծախսերով և ավելի նպատակային:
3. Տարածաշրջանում խիստ արդյունավետ կլինի հարավհայաց լանջերին լեռնալանջային կլիմայակայուն ջերմատների կառուցումը, որը, ճիշտ է, պահանջում է սկզբնական էական ներդրումներ և զգալի շինարարական աշխատանքներ, բայց ունի շատ արդյունավետ ջերմափոխանակության և ջերմակուտակիչ համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ջերմատուներ տարվա բոլոր եղանակներին շահագործել առանց լրացուցիչ ջեռուցման անհրաժեշտության:
4. Բարելավել գյուղատնտեսական կենդանիների կերերի բազան՝ նոր կլիմայակայուն, բազմամյա կերային մշակաբույսերի ներդրման և կանաչ կերերի հիդրոպոնիկ աճեցման միջոցով: Այս երկու ուղղություն էլ թիրախ տարածաշրջանում շատ հեռանկարային են, քանի որ այստեղ անասնապահության առաջատար ուղղություններից է կաթնային տավարաբուծությունը, որը մտուրային շրջանում կենդանիների բարձր կաթնատվության համար պահանջում է հյութալի վիտամինային կերեր: Նման կերեր հնարավոր է ստանալ ինչպես միամյա, այնպես էլ բազմամյա բույսերից՝ ոլոռ, եգիպտացորեն, այծախոտ արևելյան, սիլֆիա թափանցատերև և այլն: Իսկ հիդրոպոնիկ աճեցման համար՝ գարի, վարսակ, ցորեն, աշորա և այլն:
5. Տարածաշրջանում ներդնել էներգետիկ մշակաբույսերի աճեցումը, որպես չօգտագործվող հողերի օգտագործման նոր տարբերակ, ցանքաշրջանառության մեջ նոր մշակաբույսեր ներգրավելու և գյուղատնտեսությունը տարածաշրջանի էներգետիկ անվտանգության կարևորագույն ուղղություն դարձնելու հեռանկար: «Էներգետիկ մշակաբույսները» արագ աճող և մեծ ծավալի կենսազանգված գոյացնող միամյա կամ բազմամյա բույսեր են, որոնք կարող են ունենալ նաև կերային և մեղվաբուծության զարգացումը խթանող նշանակություն: Տարածաշրջանում նպատակահարմար է որպես էներգետիկ, կերային և մեղվաբուծությունը խթանող բուսատեսակ մշակել գետնախնձոր, եգիպտացորենի վաղահաս սորտեր, հլածուկ, այծախոտ արևելյան, սիլֆիա թափանցատերև և այլն:

6. Տարածաշրջանի համայնքներում և առանձին բնակավայրերում ձևավորել գյուղատնտեսական տարբեր արտադրատեսակների բրենդներ (ապրանքանիշեր)՝ դրանց վրա կենտրոնացնելով առկա ներուժը (օրինակ՝ ավելուկ և դրա հետ կապված ամեն ինչ, բոքոն և այլ հացատեսակներ, պանրի տարբեր տարատեսակներ, հատապտուղների արտադրություն, մսային ուտեստների տնային արտադրություն և այլն):
7. Տարածաշրջանի որոշ բնակավայրեր կարելի է վերածել էկոհամայնքների և պերմակուլտուրալ տնտեսությունների, որոնք իրենց կայուն գյուղատնտեսական համակարգով կարող են գրավել շատերին՝ գյուղական տուրիզմի և ագրոտուրիզմի սիրահարներին:
8. Անհրաժեշտ է զարգացնել անասնապահությունից ստացվող ենթամթերքների և հումքի վերամշակման տարբեր ուղղություններ՝ տնային մսամթերքների պատրաստում, կաշվի մշակություն և այլն, բացի այդ, անասնապահական թափոնների հիման վրա կոմպոստի և բիոհումուսի արտադրություն:
9. Բիոդինամիկ մեղվաբուծության զարգացումը տարածաշրջանի համար կարող է դառնալ ամենաեկամտաբեր ուղղություններից մեկը, որը ոչ միայն կարող է ավելացնել բնակչության եկամուտները, այլ նաև էականորեն ազդել բնական միջավայրի բարելավման վրա:
10. Տարածաշրջանում անպայման հիմնել գյուղատնտեսական ճանապարհամերձ շուկա և գյուղ. մթերքի մշտական վաճառակետեր, որոնք հնարավորություն կտան տեղում շուկայական գներով իրացնել գյուղատնտեսական մթերքները:

Պատվիրատու՝ «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական
կազմակերպություն

«Քաղաքացիական հասարակության հզորացումը
Հայաստանի մարզերում» ԾՐԱԳԻՐ

«Շիրակի մարզի հյուսիսային միավորված համայնքերում
գյուղատնտեսության ներկա վիճակը, բնապահպանական
մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները»
թեմայով վերլուծություն

Վերլուծության հեղինակ՝
Գևորգ Պետրոսյան
«Բիոսոփիա» ՀԿ

ԳՅՈՒՄՐԻ

2021թ.